<<Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամ>> (ՀԳՏՏԶՀ) Fund for Rural Economic Development in Armenia (FREDA)	<<ՊԱՍՎ>> Հետազոտական վերլուծական կենտրոն>> հասարակական կազմակերպություն (<<ՊԱՍՎ>> ՀՎԿ ՀԿ) “Research-analitical center “PASV” non-governmental organization (PASV RAC NGO)

Ծառայությունների մատուցման

Պայմանագիր FREDA/CS-2017/011-3

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

<<Հայաստանում խաղողագործության և գինեգործության շուկայի հետազոտության թարմացում>>

Սեպտեմբեր 2017 թ.

Ներածություն

Հայաստանում խաղողագործության և գինեգործության վերաբերյալ շուկայի ուսումնասիրությունը իրականացվել է «Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի» (ՀԳՏՏԶՀ) պատվերով, նախկինում իրականացված նմանատիպ ուսումնասիրության թարմացման նպատակով:

ՀԳՏՏԶՀ-ն ստեղծվել է 2009թ.-ի հունվարի 8-ին Հայաստանում «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագրի «Գյուղական ֆինանսավորման» բաղադրիչի շրջանակներում: «Գյուղական ֆինանսավորման» բաղադրիչի հիմնական նպատակն է նպաստել գյուղական փոքր ֆերմերների, փոքր և միջին չափի ձեռնարկությունների զարգացմանը և կայուն տնտեսական աճին:

Հիմնադրամը փոքր և միջին չափի գյուղմթերք վերամշակող ձեռնարկություններին, արտահանողներին, մարքեթինգային գործակալներին և գյուղական արժեքային շղթայում այլ խթանող կազմակերպություններին, որոնք փոխկապակցված են աղքատ գյուղական տնտեսությունների հետ, առաջարկում է ֆինանսավորում կապիտալ ներդրման և ստորադաս փոխառությունների միջոցով, զուգորդելով այն կառավարման աջակցման տարբեր տեսակներով:

Ուսումնասիրության իրականացման համար օգտագործվել են տարբեր հետազոտական գործիքներ և մեթոդներ, ներառյալ վիճակագրական և առաջնային տվյալների հավաքագրում (քանակական և որակական հարցումներ, հարցազրույցներ և այլն) ֆերմերային տնտեսություններից, վերամշակող կազմակերպություններից, պետական շահագրգիռ հաստատություններից և ոլորտի մասնագետներից:

Հայաստանի Հանրապետություն
Համառոտ տեղեկանք

Հայաստանի Հանրապետության պետական անկախության հռչակագիրն ընդունվել է 1991թ. Սեպտեմբերի 21-ին:

Երկիրը գտնվում է Ասիայի հարավ արևմուտքում: Հյուսիսից սահմանակից է Վրաստանին, հարավից՝ Իրանին, արևելքից՝ Ադրբեջանին և արևմուտքից՝ Թուրքիային:

Վարչատարածքային բաժանումը

Հայաստանի Հանրապետության տարածքը կազմում է 29743 քառ.կմ: Հանրապետության տարածքը բաժանված է 10 մարզերի: Ներկայումս հանրապետությունում ընթանում է համայնքների խոշորացման ծրագիրը, ըստ որի նախատեսվում է ունենալ թվով 300 համայնքներ (նախկին 918 համայնքի փոխարեն), որոնք միավորում են 47 քաղաքային և 952 գյուղական բնակավայրեր:

Ժողովրդագրական բնութագիրը

2017թ. Հունվարի 1-ի դրությամբ հանրապետության մշտական բնակչությունը կազմում է 2986,1 հազար մարդ, այդ թվում՝

-քաղաքային՝ 1901.4 հազար մարդ - 63.7 %,

-գյուղական՝ 1084.7 հազար մարդ – 36.3 %:

Բնակչության 47.7 %-ը տղամարդ են, 52.3 %-ը՝ կին: Բնակչությունը խիստ միատարր է՝ հայերը կազմում են 98 %: Մնացած 2 %-ը կազմում են եզիդները, ռուսները, ասորիները, ուկրաինացիները, քրդերը, հույները և այլ ազգային փոքրամասնություններ:

Հողային ռեսուրսները

Հայաստանի Հանրապետությունը լեռնային երկիր է, տարածքի մոտ 90 %-ը տեղաբաշխված է ծովի մակարդակից 1000 մետրից ավելի բարձրության վրա: Հողային ռեսուրսները կազմում են 2974.3 հազար հա, որից գյուղատնտեսական հողատեսքերը՝ 2045.5 հազ.հա կամ 68.8 %:

Գյուղատնտեսական հողատեսքերի կառուցվածքը հետևյալն է.

- վարելահողեր՝ 446.4 հազ. հա (21.8 %),

-պտղի և խաղողի այգիներ՝ 34.7 հազ. հա (1.7 %),

-խոտհարքներ՝121.1 հազ. հա (5.9 %),

-արոտավայրեր՝ 1051.3 հազ. հա (51.4 %),

-այլ հողեր՝ 392.0 հազ. հա (19.2 %):

Բովանդակություն

Հապավումներ 6
1. Իրավիճակի նկարագրություն 7
1.1. Մակրոտնտեսական ցուցանիշներ 7
1.2. Գյուղատնտեսական գոտիներ 9
1.3. Հողեր 10
2. Խաղողագործություն 14
2.1. Խաղողի տարածքները 14
2.2. Խաղողի բերքը և միջին բերքատվությունը 17
2.3. Խաղող արտադրողները 21
2.4. Խաղողի տեսակները 25
2.5. Խաղողագործական տնտեսությունների չափերը 28
2.6. Խաղողի ապրանքայնության մակարդակը 34
2.7. Արտադրական գործընթացը 36
2.8. Խաղողի այգի հիմնելու ծախսերը 39
2.9. Խաղողի գները 43
2.10. Ընտրանքային հարցում 44
2.11. Խաղողի արտադրության ծախսերը 46
3. Խաղողի վերամշակում և գինեգործություն 49
3.1. Գինեգործության ոլորտի նախապատմություն 49
3.2. Գինու արտադրությունը կարգավորող օրենքը 50
3.3. Վերամշակման տեխնոլոգիաներ 51
3.4. Ընկերությունների դասակարգումն ըստ օգտագործվող սարքավորումների 55
3.5. Խաղողի պահպանման և առաքման ժամանակացույցը 56
3.6. Հիմնական վերամշակող ընկերություններ 56
3.7. Վայրերը 62
3.8. Պայմանագրերի կնքման պրակտիկա, առավելությունները և թերությունները 64
3.9. Գինու արտադրության և խաղողագործության վիճակագրական վերլուծություն 65

3.10. Գինեգործության և խաղողագործության ոլորտների պետական աջակցության ուղիները 69
4. Տեղական վաճառք 71
4.1. Ներմուծում տեղական շուկա 71
4.2. Օգտագործվող արժույթը 73
4.3. Ապրանքատեսակների մասնաբաժինները և վաճառքի գները 73
4.4. Փոխարինող ապրանքների առկայություն 76
4.5. Վաճառքի ուղիներ 77
4.6. Շուկա մուտք գործելու խոչընդոտներ 78
5. Օտարերկրյա շուկաներ 79
5.1. Արտահանման ծավալները 79
5.2. Արտահանման հնարավորությունները և հայկական գինու դիրքը միջազգային շուկայում 82
5.3. Հայկական գինու վաճառքի գներն ու շահութաբերությունն այլ երկրներում 83
5.4. Ռուսական, եվրոպական և ամերիկյան շուկաների հակիրճ վերլուծություն 85
5.5. Հայկական գինու արտահանման ուղիներ 94
5.6. Շուկայի մուտքի խոչընդոտներ 96
6. Խաղողագործության և գինեգործության ոլորտների SWOT վերլուծություն 100
7. Հավելվածներ 102

Հապավումներ

ՀԳՏՏԶՀ	Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամ
ԳՀՀ	Գյուղատնտեսական համատարած հաշվառում
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն
ԳՏ	Գյուղացիական տնտեսություն
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԵՄ	Եվրոպական Միություն

1. Իրավիճակի նկարագրություն

1.1. Մակրոտնտեսական ցուցանիշներ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) տվյալների, 2016թ. ՀՀ իրական համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) կազմել է 5053.2 մլրդ դրամ, որը նախորդ տարվա մակարդակը գերազանցում է միայն 0.2 %-ով: Նախորդ 3 տարիներին (2013-2015թթ.) ՀՆԱ-ի միջին տարեկան աճը գերազանցում էր 3 %-ը:

Հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2016թ. ընթացիկ գներով կազմել է 907,5 մլրդ.դրամ, որը նախորդ տարվա մակարդակին զիջում է 5,2 %-ով (համադրելի գներով): ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի դինամիկան ընթացիկ գներով, վերջին 5 տարիներին մարզերի կտրվածքով բնութագրվում է հետևյալ կերպ.

Աղյուսակ 1. ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքն, ընթացիկ գներով

	2011	2012	2013	2014	2015	2016
	մլրդ. դրամ					
Արագածոտն	76,8	86,0	89,2	98,8	100,0	88.5
Արարատ	116,8	125,3	136,2	141,4	141,6	132.9
Արմավիր	135,0	148,4	163,7	173,7	174,9	167.0
Գեղարքունիք	152,8	152,7	165,3	188,7	190,4	153.0
Լոռի	57,1	57,4	67,5	73,8	75,2	68.1
Կոտայք	50,8	53,0	56,3	59,8	61,3	59.4
Շիրակ	93,0	94,0	106,3	109,0	109,5	100.7
Սյունիք	50,4	57,7	62,4	70,2	70,2	64.4
Վայոց Ձոր	16,9	18,4	19,9	21,4	21,4	21.8
Տավուշ	38,9	40,4	43,8	45,4	46,0	41.3
ք.Երևան	6,5	8,2	8,5	11,3	10,7	10.4
Ընդամենը ՀՀ	**795,0**	**841,5**	**919,1**	**993,5**	**1001,2**	**907.5**

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքում մարզերի տեսակարար կշիռները վերջին տարիներին էական փոփոխություններ չեն կրել:



Առաջատարն Արմավիրի մարզն է, որտեղ 2016թ. արտադրվել է ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի 18.4 %-ը (Նկար 1): Արմավիրին հաջորդում են Գեղարքունիքի (16,9 %) և Արարատի (14,6 %) մարզերը: Հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքի կեսը արտադրվում է նշված 3 մարզերում:



Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ամենակարևոր արտադրանքը (Նկար 2) միսն է (20 %), որին հաջորդում են բանջարեղենն ու բոստանը (13 %), կարտոֆիլը (12 %) և կաթը (11 %): Չնայած այն հանգամանքին, որ վերջին տարներին պտղի և խաղողի տարածքների ավելացման միտումներ կան (որին կանդրադառնանք հետագայում), դրանց բաժինը գյուղատնտեսության համախառն արատադրանքի կազմում ընդամենը 13 % է: Սույն հաշվետվության ուսումնասիրության արտադրանքի՝ պտղի և հատապտղի բաժինը կազմում է գյուղատնտեսության համախառն արտադրանքի 8 %-ը:

Ընդհանուր առմամբ, հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքի 60 %-ը ստացվում է բուսաբուծության, իսկ 40 %-ը՝ անասնապահության ճյուղում: Այս համամասնության, տարբեր տարիներին որոշակի շեղումները հիմնականում պայմանավորված են բնակլիմայական պայմանների հետևանքով բուսաբուծության արտադրանքի տատանումներով: Հանրապետության հիմնական գյուղատնտեսական մարզերը բուսաբուծական մասնագիտացում ունեն: Այսպես, Արարատի մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքի կազմում բուսաբուծության բաժինը 80 % է, Արմավիրում՝75 և Գեղարքունիքում՝ մոտ 70 %: Լոռու, Կոտայքի և Վայոց Ձորի մարզերում գերակշռում

է անասնապահության ճյուղը, որի բաժինը համախառն արատադրանքի մեջ տատանվում է 60-70 %- ի սահմաններում: Հանրապետության մնացած 4 մարզերում այս ցուցանիշները մոտ են միջին հանրապետական մակարդակին:

1.2. Գյուղատնտեսական գոտիներ

Հայաստանի տարածքը բաժանված է ինն գյուղատնտեսական գոտիների.

1. Արարատյան դաշտավայր: Ընդգրկում է Արարատի և Արմավիրի մարզերը: Գոտու ընդհանուր տարածքը 32 000 հեկտար է (երկրի ընդհանուր տարածքի 10.8 տոկոսը): Գյուղատնտեսական հողերը զբաղեցնում են տարածքի 56%-ը, որի գերակշիռ մասը գտնվում է 800-ից 1000 մ բարձրության վրա: Հողագործությունը բացառապես ոռոգովի է:
2. Արարատյան դաշտավայրի բարձրադիր գոտի: Ընդգրկում է Աշտարակի, Նաիրիի, Թալինի և Կոտայքի նախկին վարչական շրջանները, զբաղեցնում է տարածքի 307 000 հեկտարը (10.3%): Գյուղատնտեսական հողերը կազմում են տարածքի 53 տոկոսը: Ներառում է տարածքներ, որոնք գտնվում են ծովի մակերևույթից 900-ից 1000 մետր և ավելի բարձրության վրա: Հողագործությունը ոռոգովի է, թեև վարվում է նաև անձրևաջրերով:
3. Կենտրոնական գոտի: Ընդգրկում է Արագածոտնի մարզի Ապարանի և Արագածի շրջանները, Կոտայքի մարզի Հրազդանի շրջանը և զբաղեցնում է 194 000 հեկտար (6.5 տոկոս) տարածք: Գյուղատնտեսական հողերը զբաղեցնում են տարածքի 50 տոկոսը: Ծովի մակերևույթից բարձրությունը կազմում է 1400-1800 մ: Հողերը ոռոգովի չեն:
4. Սևանի ավազան: Ընդգրկում է Գեղարքունիքի մարզը: Գյուղատնտեսական հողատարածքները կազմում են ընդհանուր տարածքի 61 տոկոսը: Առաջին ենթագոտին գտնվում է ծովի մակերևույթից մինչև 2000 մ բարձրության վրա, իսկ երկրորդը՝ 2000 մետրից բարձր: Առաջին ենթագոտում առկա է ոռոգման կարիք:
5. Հյուսիս-արևելյան գոտի: Ներառում է Իջևանի, Նոյեմբերյանի, Թումանյանի և Տավուշի նախկին վարչական շրջանները: Գյուղատնտեսական հողերը զբաղեցնում են տարածքի 22 տոկոսը: Ցածրադիր ենթագոտին գտնվում է մինչև 900 մետր բարձրության, իսկ երկրորդ ենթագոտին՝ ավելի քան 900 մ. բարձրության վրա: Գյուղատնտեսությունը վարում են անձրևաջրերի հաշվին, թեև մասամբ նաև ոռոգվում է:
6. Լոռի-Փամբակ գոտի: Ներառում է Գուգարքի, Տաշիրի և Ստեփանավանի նախկին վարչական շրջանները: Գյուղատնտեսական տարածքները զբաղեցնում են գոտու 59 տոկոսը: Այն բաժանված է

երկու ենթագոտիների՝ լեռնային անտառածածկ (մինչև 1500 մետր) և լեռնային տափաստանային (1500 մետրից բարձր): Երկու ենթագոտիներում էլ գյուղատնտեսությունը վարում են անձրևաջրերի հաշվին:

7. Շիրակի գոտի: Ներառում է Ամասիայի, Անիի, Ախուրյանի և Աշոցքի նախկին վարչական շրջանները: Գյուղատնտեսական հողերը զբաղեցնում են ընդհանուր տարածքի 60 տոկոսը: Առաջին ենթագոտին տեղակայված է մինչև 1700 մետր բարձրության վրա, իսկ երկրորդը՝ 1700 մետրից բարձր: Առաջին գոտում կա ոռոգման անհրաժեշտություն:
8. Վայքի գոտի: Ընդգրկում է Վայոց Ձորի մարզը: Գյուղատնտեսական տարածքները զբաղեցնում են ընդհանուր տարածքի 33 տոկոսը: Գոտին բաժանված է երեք ենթագոտիների (մինչև 1400 մետր, 1400-1900 մետր, 1900 մետրից բարձր): Առաջին երկու ենթագոտիներում պահանջվում է ոռոգում:
9. Ջանգեզուրի գոտի: Ընդգրկում է Սյունիքի մարզը: Գյուղատնտեսական տարածքները զբաղեցնում են ընդհանուր տարածքի 27.8 տոկոսը: Առաջին ենթագոտին գտնվում է մինչև 900 մետր բարձրության վրա, հողագործությունը ոռոգովի է: Երկրորդ և երրորդ ենթագոտիների գյուղատնտեսական հողերն անջրդի են:

1.3. Հողեր

Համաձայն ՀՀ հողային հաշվեկշռի տվյալների, ՀՀ հողային ֆոնդը 2016թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմում է 2974,3 հազ. հա, որից գյուղպիտանի հողեր են համարվում 2045,5 հազ. հա-ը կամ 68,8 %-ը:

Աղյուսակ 2. ՀՀ գյուղատնտեսական հողատեսքերը փոփոխությունները վերջին 10 տարիներին

Հողատեսքեր	2006թ.		2016թ.		2016թ. ավել(+), պակաս(–) 2006թ. նկատմամբ
	հազ.հա	%	հազ.հա	%	հազ.հա
Վարելահող	452,9	21,3	446,4	21,8	-6,5
Բազմամյա տնկարկներ	27,3	1,3	34,7	1,7	+7,4
Խոտհարք	127,5	6,0	121,1	5,9	-6,4
Արոտավայր	1125	52,8	1051,3	51,4	-73,7
Այլ հողեր	396,9	18,6	392,0	19,2	-4,9
Ընդամենը գյուղպիտանի հողեր	2129,6	100,0	2045,5	100,0	-84,1

Հանրապետության գյուղպիտանի հողերի կեսը կազմում են արոտավայրերը, իսկ մշակելի հողատարածքները (վարելահող+բազմամյա տնկարկներ) կազմում են գյուղպիտանի հողերի 23.5 %-ը: Բերված տվյալները վկայում են, որ վերջին 10 տարիների ընթացքում գյուղատնտեսական բոլոր հողատեսքերի տարածքների նվազում է արձանագրվել: Միակ բացառությունը կազմում են բազմամյա տնկարկները, որոնց տարածքները, նշված ժամանակահատվածում ավելացել են 7.4 հազ. հա-ով: Ամենամեծ չափով՝ 73.7 հազ. հա նվազել են արոտավայրերի տարածքները: 2006թ. և 2016թ. հողային բալանսների համեմատական վերլուծությունից պարզվում է, որ գյուղպիտանի հողերի տարածքների 84.1 հազ. հա-ով նվազումը պայմանավորված է գյուղպիտանի հողերի՝ անտառային, բնակավայրերի և արդյունաբերության ու ընդերքօգտագործման հողերի վերափոխման հանգամանքով:

Հանրապետության գյուղատնտեսության զարգացման տեսանկյունից, խիստ դրական երևույթ կարելի է համարել դիտարկվող ժամանակահատվածում բազմամյա տնկարկների տարածքների 27 %-ի չափով աճը: Ավելին, ըստ պաշտոնական վիճակագրության, բազմամյա տնկարկների տարածքների դինամիկան անընդհատ աճման միտումներ է արձանագրում: Այս ամենի հետ, իհարկե չպետք է անտեսել այն հանգամանքը, որ անկախության առաջին տարիներին, պայմանավորված սոցիալ-տնտեսական խորը ճգնաժամով, տասնամյակներով ձևավորված առևտրատնտեսական կապերի վերացմամբ, վերամշակող արդյունաբերության փլուզմամբ, ամենամեծ անկումն արձանագրվեց հենց այգեգործության ոլորտում: Պտղատու և խաղողի այգիների տարածքներն այդ ընթացքում կրճատվեցին մոտ 3 անգամ, որը խորհրդային տարիների մակարդակին (80 հազ. հա) դեռևս շատ է զիջում:

Ըստ 2014թ. Գյուղատնտեսական համատարած հաշվառման (այսուհետ՝ ԳՀՀ) տվյալների հանրապետությունում հաշվառվել են գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր (սեփական, վարձակալած, տնամերձ, ամառանոցային) տնօրինող 345,9 հազար ֆիզիկական[1] (այսուհետ կանվանենք տնտեսություններ) և 342 իրավաբանական անձինք, որոնց հողատարածքները համապատասխանաբար կազմել են 513.0 հազ. հա (1 տնտեսության հաշվով՝ 1.5 հա) և 21.4 հազ. հա (1 իրավաբանական անձի հաշվով՝ 62.6 հա): Տնտեսությունների այս քանակից, հաշվառման պահին, հողագործությամբ զբաղվել են 305,4 հազար ֆիզիկական և 275 իրավաբանական անձինք:

[1] - ներառում է գյուղական և քաղաքային անհատական տնտեսություններ, ինչպես նաև այգեգործական (դաչա) ընկերակցությունների անդամների անհատական տնտեսություններ:

Գյուղատնտեսական հողատեսքեր տնօրինող 345.9 հազար ֆիզիկական անձանցից սեփական գյուղատնտեսական հողեր ունեն 212.9 հազարը կամ 61.5 %-ը, իսկ 342 իրավաբանական անձանցից, սեփական գյուղատնտեսական հողեր ունեն 237-ը կամ 69.3 %-ը:

Տնտեսությունների սեփական հողերը խիստ մասնատված են: Այսպես, սեփական գյուղատնտեսական հողեր ունեցող տնտեսությունների միայն 35.3 %-ի հողերն են 1 հողակտորի վրա: Մնացած տնտեսություններց 25.1 %-ի գյուղատնտեսական հողերը տեղաբաշխված են 2 հողակտորի, 15.1 %-ինը՝ 3 հողակտորի, 10.1 %-ինը՝ 4 հողակտորի, 5.9 %-ինը՝ 5 հողակտորի և 8.5 %-ինը՝ 6 և ավելի հողակտորների վրա: Հողերի մասնատվածության պատկերը գրեթե նույնն է նաև իրավաբանական անձանց մոտ: Բացի հողերի մասնատվածությունից, բարձր է նաև հողերի բաշխվածության անհամաչափության մակարդակը: Չնայած այն հանգամանքին, որ հողերի սեփականաշնորհումը հանրապետությունում իրականացվել է պահպանելով հավասարության սկզբունքը, սակայն ելնելով սեփականաշնորհման ելակետային տվյալների (համայնքի բնակչության թիվ և համայնքի տնօրինած հողերի չափ) տարբերություններից, հողերի բաշխումն անհավասար է ստացվել: Սրան էլ ավելացել է սեփականաշնորհումից հետո հողերի առք ու վաճառքի ազդեցությունը, որի արդյունքում հողերը կենտրոնացել են բնակչության որոշակի խմբերի մոտ՝ էլ ավելի խորացնելով հողերի բաշխվածության անհավասարությունը: Այսպես, ամենափոքր՝ մինչև 1 հա հող ունեցող տնտեսությունների 60 %-ը տիրապետում է գյուղատնտեսական հողերի 18.9 %-ին (Նկար 3), այն դեպքում, երբ ամենամեծ՝ 3 հա և ավելի հող ունեցողների 10 %-ը տիրապետում է գյուղատնտեսական հողերի մոտ 45 %-ին:



Գյուղատնտեսական նշանակության հողեր տնօրինող իրավաբանական անձանց, ըստ հողերի չափերի, բաշխումն համեմատաբար հավասարաչափ է և ըստ խմբերի տատանվում է 1.5 % -ից (մինչև 0.5 հա) մինչև 12.9 % (10-20 հա) սահմաններում: Իրավաբանական անձանց մոտ 60 %-ի գյուղատնտեսական նշանակության հողերի չափերը գերազանցում են 5 հա-ը:

Աղյուսակ 3. Տնտեսությունների խմբավորումն ըստ մարզերի և գյուղատնտեսական նշանակության հողերի չափերի

	Խմբերը, հա							
	մինչև 0.5	0.5-0.99	1-1.99	2-2.99	3-4.99	5-9.99	10-19.99	20 և ավելի
	%							
Արագածոտն	28.3	19.7	23.0	11.9	9.5	6.1	1.1	0.5
Արարատ	57.7	28.3	9.6	2.1	1.5	0.6	0.2	0.1
Արմավիր	41.9	25.4	22.0	5.8	3.3	1.3	0.3	0.1
Գեղարքունիք	28.1	15.8	29.8	13.3	8.5	3.3	0.9	0.4
Լոռի	41.0	12.8	20.5	11.2	7.8	5.2	1.1	0.3
Կոտայք	52.3	16.7	16.4	7.8	4.3	1.8	0.5	0.1
Շիրակ	24.8	11.7	23.3	15.2	12.7	9.0	2.6	0.9
Սյունիք	47.0	5.5	13.3	9.9	12.7	9.4	1.9	0.3
Վայոց ձոր	36.5	21.2	16.4	10.1	9.8	5.3	0.5	0.3
Տավուշ	43.8	18.6	26.0	7.8	3.1	0.6	0.1	0.0
ք. Երևան	98.0	1.9	0.03	0.04				
Ընդամենը ՀՀ	41.7	17.9	20.2	9.0	6.4	3.6	1.1	0.0

Գյուղատնտեսական հողեր չափերով ամենափոքր տնտեսությունների տեսակարար կշռով <<առաջատարը>> Արարատի մարզն է, որտեղ տնտեսությունների 86 %-ի յուղատնտեսական հողերի չափը չի հասնում 1 հա-ի, ավելին, մոտ 58 %-ի հողը մինչև 0.5 հա է կազմում: Փոքր տնտեսությունների տեսակարար կշռով աչքի են ընկնում նաև Կոտայքի (մինչև 1 հա գյուղատնտեսական հող ունեցող տնտեսությունների տեսակարար կշիռը՝69 %) և Արմավիրի (67.3 %) տնտեսությունները: Ասվածը, ինչպես նշվեց ավելի վաղ, հիմնականում պայմանավորված է Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերի բնակչության բարձր խտությամբ և սակավահողությամբ: Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ այս մարզերում համեմատաբար արագ է ընթանում նաև առքուվաճառքի միջոցով հողերի խոշորացման գործընթացը, որը հիմնականում պայմանավորված է հողի համեմատաբար բարձր

պահանջարկով, որն էլ իր հերթին պայմանավորված է հողերի արդյունավետության բարձր մակարդակով և Երևանին մոտ գտնվելու հանգամանքով:

2. Խաղողագործություն

2.1. Խաղողի տարածքները

Հայաստանի Հանրապետության ներկայիս տարածքում խաղողագործությամբ զբաղվում էին դեռևս վաղեմի ժամանակներից: Հայաստանը հայտնի էր ինչպես խաղող արտադրող, այնպես էլ խաղողի վերամշակումով զբաղվող երկիր:

Խաղողի արտադրությունը ներկայումս հանդիսանում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության կարևոր ոլորտներից մեկը: Խաղողի տարածությունները վերջին 10 տարիներին միջին հաշվով կազմել են ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողերի շուրջ 0.8%-ը, մշակելի հողատարածքների (վարելահող+բազմամյա տնկարկներ) 3.6%-ը իսկ խաղողի համախառն արտադրանքն ընդամենը գյուղատնտեսության համախառն արտադրանքի շուրջ 4.5 %-ը:

Խաղողագործությամբ ՀՀ-ում զբաղվում են Արագածոտնի, Արարատի, Արմավիրի և Տավուշի մարզերը: Խաղողագործությունը լայն տարածում ունի նաև Վայոց ձորի մարզում, ինչպես նաև Երևան քաղաքում:

Նկար 4. Խաղողի այգիների տարածությունները
ՀՀ-ում 2000-2016 թթ.

հազ.հա



Աղյուսակ 4. Խաղողի այգիների տարածությունները* Հայաստանի Հանրապետությունում

	2000		2005		2010		2011	
	Ընդամենը տնկարկներ,հա	*որից՝* պտղատու հասակի, հա	Ընդամենը տնկարկներ, հա	*որից՝* պտղատու հասակի, հա	Ընդամենը տնկարկներ, հա	*որից՝* պտղատու հասակի, հա	Ընդամենը տնկարկներ, հա	*որից՝* պտղատու հասակի, հա
Ընդամենը ՀՀ	**15027**	**14571**	**14932**	**13475**	**17373**	**14613**	**16288**	**14478**
այդ թվում՝								
ք. Երևան	618	613	637	630	612	612	612	612
Արագածոտն	2298	2298	1846	1826	1571	1514	1148	1138
Արարատ	3715	3306	4298	3427	4992	4521	4881	4593
Արմավիր	5698	5662	5272	4872	7379	5234	6863	5423
Գեղարքունիք	-	-	-	-	-	-	-	-
Լոռի	69	69	65	65	64	64	64	64
Կոտայք	676	676	458	452	362	362	290	286
Շիրակ	-	-	-	-	-	-	-	-
Սյունիք	128	122	185	182	185	185	185	185
Վայոց Ձոր	556	556	852	706	895	809	889	826
Տավուշ	1269	1269	1319	1315	1313	1312	1356	1351

(շարունակություն)

	2012		2013		2014		2015		2016	
	Ընդամենը տնկարկներ, հա	*որից՝* պտղատու հասակի, հա	Ընդամենը տնկարկներ, հա	*որից՝* պտղատու հասակի, հա	Ընդամենը տնկարկներ, հա	*որից՝* պտղատու հասակի, հա	Ընդամենը տնկարկներ, հա	*որից՝* պտղատու հասակի, հա	Ընդամենը տնկարկներ, հա	*որից՝* պտղատու հասակի, հա
Ընդամենը ՀՀ	**17415**	**15723**	**17465**	**16065**	**17215**	**16323**	**17296**	**16389**	**17059**	**16231**
այդ թվում՝										
ք. Երևան	612	612	612	612	612	612	612	612	612	612
Արագածոտն	1694	1599	1698	1665	1699	1678	1699	1680	1699	1682
Արարատ	5120	4848	5143	4927	5083	4951	5113	4972	5039	4910
Արմավիր	7033	5868	7136	6126	7119	6411	7120	6410	6882	6297
Գեղարքունիք	1	1	1	1	1	1	-	-	-	-
Լոռի	64	64	64	64	64	64	64	64	67	67
Կոտայք	403	289	336	223	161	160	161	160	160	160
Շիրակ	-	-	-	-	-	-	-	-	-	-
Սյունիք	185	185	185	185	185	185	185	185	185	185
Վայոց Ձոր	928	885	935	911	935	916	985	972	1066	991
Տավուշ	1375	1372	1355	1351	1356	1345	1357	1334	1349	1327

* Աղբյուրը՝ <<Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը>> վիճակագրական տեղեկագիր, ծածկագիրը՝ 1220-203, *ՀՀԱՎԾ կայքէջ* ՝ **http://www.armstat.am**

2.2. Խաղողի բերքը և միջին բերքատվությունը

ՀՀ-ում խաղողի արտադրությամբ են զբաղվում ընդհանուր առմամբ 416 համայնք, որոնցից շուրջ 45%-ը (187 համայնք) գտնվում են Արարատի և Արմավիրի մարզերում:

Խաղողի տարածությունները ՀՀ-ում վերջին տարիներին կազմել են շուրջ 17 հազ. հեկտար, որից բերքատու հասակինը՝ 16 հազ. հեկտար: Խաղողի տարածությունների շուրջ 70%-ը գտնվում են Արարատյան դաշտավայրում (մոտ 12 հազ.հեկտար), որն իր մեջ ներառում է Արարատի և Արմավիրի մարզերը: Արագածոտնի, Վայոց ձորի և Տավուշի մարզերին բաժին է ընկնում խաղողի տարածությունների շուրջ 24%-ը: 2000թ. հետ համեմատած ՀՀ-ում խաղողի տարածություններն ավելացել են 2000 հեկտարով կամ շուրջ 13%-ով, ինչը վկայում է ՀՀ-ում խաղողագործության զարգացման միտումների մասին:

Վերջին տարիներին արձանագրվել է նաև խաղողի համախառն բերքի ծավալների աճ:

Նկար 5. Խաղողի համախառն բերքը* ՀՀ-ում 2000-2016 թթ.



Աղյուսակ 5. Խաղողի համախառն բերքը Հայաստանի Հանրապետությունում

	Համախառն բերքը, ցենտներ								
	2000	2005	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Ընդամենը ՀՀ	**1158414**	**1643534**	**2229045**	**2295890**	**2414292**	**2408158**	**2613249**	**3091812**	**1787518**
այդ թվում՝									
ք. Երևան	38600	19400	33088	40055	41000	42000	48000	58000	35000
Արագածոտն	61390	99900	119661	122634	140646	145095	155000	179000	51047
Արարատ	458258	656512	933126	947023	1002902	1043260	1122148	1252739	759342
Արմավիր	479088	726159	974912	995278	1034210	959207	1072142	1355470	836836
Գեղարքունիք	-	-	-	-	20	0.0	0.0	-	-
Լոռի	2586	1242	1209	1297	1651	2174	3548	1857	1313
Կոտայք	10115	11102	3777	4927	4943	5976	3505	8192	2954
Շիրակ	-	-	-	-	-	-	-	-	-
Սյունիք	5043	9449	9072	9344	11495	11919	11959	12092	9244
Վայոց Ձոր	39993	34240	38085	42105	44035	53240	51110	57085	19777
Տավուշ	63341	85530	116115	133227	133390	145287	145837	167377	72005

* Աղբյուրը՝ <<Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը>> վիճակագրական տեղեկագիր, ծածկագիրը՝ 1220-203, *ՀՀՍՎԾ կայքէջ* ՝ http://www.armstat.am

2000թ.-ին խաղողի համախառն բերքը ՀՀ-ում կազմել է մոտ 116 հազ.տոննա, 2010թ.՝ 223 հազ.տոննա, 2015թ.՝ 309 հազ.տոննա և 2016թ.՝ 179 հազ.տոննա: Բերված տվյալներից երևում է, որ 2000թ. համեմատ հանրապետությունում արձանագրվել է խաղողի համախառն բերքի կայուն աճ: 2016թ.-ին 2015թ. համեմատ համախառն բերքի անկումը պայմանավորված է 2015-2016թթ. ձմռանը տեղի ունեցած խաղողի այգիների ցրտահարությամբ:

Չնայած նրան, որ Արարատի և Արմավիրի մարզերում են գտնվում խաղողի այգիների շուրջ 70 %-ը՝ այդ մարզերին բաժին է ընկնում խաղողի համախառն արտադրանքի ավելի քան 84%-ը, ինչը վկայում է նշված մարզերում խաղողագործության առավել զարգացած լինելու մասին, ինչին նպաստում են նաև բարենպաստ բնակլիմայական պայմանները:

Խաղողագործության մասնագիտացման և արդյունավետության ցուցանիշներից է համարվում 1 հեկտարի միջին բերքատվությունը:

Նկար 6. Խաղողի միջին բերքատվությունը* ՀՀ-ում 2000-2016 թթ.

ցենտներ/հա



Աղյուսակ 6. Խաղողի միջին բերքատվությունը Հայաստանի Հանրապետությունում

	Բերքատվությունը, ցենտներ/հեկտար								
	2000	2005	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Ընդամենը ՀՀ	**78.0**	**119.7**	**151.5**	**158.0**	**151.3**	**149.8**	**157,7**	**188.2**	**110.0**
այդթվում՝									
ք. Երևան	63.0	30.8	54.1	65.4	67.0	68.6	78,4	94.8	57.2
Արագածոտն	26.7	54.7	79.0	107.8	88.0	87.1	92,4	106.5	30.3
Արարատ	132,0	182.7	203.0	204.2	199.4	211.3	218,8	250.4	154.3
Արմավիր	84,6	149.0	186.3	183.5	176.2	156.6	167,2	211.5	132.9
Գեղարքունիք	-	-	-	-	20.0	0.0	0,0	-	-
Լոռի	37,5	19.1	18.9	20.3	25.8	34.0	55,4	29.0	19.6
Կոտայք	15,0	24.6	10.4	17.2	17.1	26.8	21,9	51.2	18.5
Շիրակ	-	-	-	-	-	-	-	-	-
Սյունիք	41,3	51.9	49.0	50.5	62.1	64.4	64,6	65.4	50.0
Վայոց Ձոր	71,9	48.0	47.1	51.0	49.8	58.4	55,8	58.7	20.0
Տավուշ	49,9	65.0	88.5	98.6	97.2	107.5	108,4	125.5	54.3

* Աղբյուրը՝ <<Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը>> վիճակագրական տեղեկագիր, ծածկագիրը՝ 1220-203, *ՀՀԱՎԾ կայքէջ* ՝ http://www.armstat.am

2015թ. միջին բերքատվության առավել բարձր ցուցանիշներ ունեն Արարատի և Արմավիրի մարզերը, որոնք գերազանցում են հանրապետության ցուցանիշը, համապատասխանաբար 62 ցենտներով կամ շուրջ 33%-ով և 23 ցենտներով կամ 13%-ով: Մյուս բոլոր մարզերում խաղողի միջին բերքատվությունը զիջում է հանրապետության միջին ցուցանիշին: Այսինքն հանրապետության նման բարձր ցուցանիշն ապահովվել է ի հաշիվ Արարատի և Արմավիրի մարզերում արձանագրված միջին բերքատվության ցուցանիշների: Հատկանշական է, որ հանրապետության միջին բերքատվության աճի միտում է արձանագրվել ուսումնասիրվող տարիների ընթացքում և 2000թ. 78ց/հա-ի դիմաց, 2016թ. հասնելով 110 ց/հա-ի: 2016թ. Արարատի մարզում խաղողի բերքատվությունը կազմել է 154 ց/հա, որը գերազանցել է հանրապետական միջինը 44 ցենտներով, Արմավիրի մարզում միջին բերքատվության ցուցանիշը կազմել է 133 ց/հա, որը գերազանցել է հանրապետական միջին ցուցանիշը 23 ցենտներով:

2.3. Խաղող արտադրողները

Համաձայն 2014թ. ՀՀ-ում իրականացված գյուղատնտեսական համատարած հաշվառման տվյալների; ՀՀ-ում գյուղատնտեսությամբ են զբաղվում 317 հազար գյուղացիական տնտեսություն, դրանցից միայն հողի մշակմամբ՝ 134 հազար, միայն անասնաբուծությամբ՝ 12 հազար և խառը գյուղատնտեսությամբ՝ 171 հազար գյուղացիական տնտեսություն:

ՀՀ-ում գյուղատնտեսական արտադրանք հիմնական արտադրողները, այդ թվում խաղողի՝ հանդիսանում են ֆիզիկական անձինք (գյուղացիական տնտեսություններ), որոնց բաժին է ընկնում գյուղատնտեսական համախառն արտադրանքի շուրջ 97%-ը:

Համաձայն գյուղատնտեսական համատարած հաշվառման տվյալների խաղողագործությամբ են զբաղվում շուրջ 66,5 հազար գյուղացիական տնտեսություն: Դրանք հիմանակնում գտնվում են Արարատի (21,6 հազար միավոր), Արմավիրի (19,4 հազար միավոր) և Տավուշի (10,6 հազար միավոր) մարզերում:

Խաղողը որպես գյուղատնտեսական արտադրանք օգտագործվում է ոչ միայն թարմ վիճակում որպես սնունդ, այլ նաև վերամշակվում է և հումք է հանդիսանում վերամշակող կազմակերպությունների համար (գինի, օղի, կոնյակ, չամիչ և այլն) արտադրատեսակ ստանալու համար: Այդ տեսանկյունից ելնելով կարևորվում է խաղողի արտադրությունը ըստ

համապատասխան սորտերի, որոնք նախատեսված են տարբեր ուղղություններով օգտագործելու համար:

Նկար 7. ՀՀ-ում խաղողի մշակմամբ զբաղվող տնտեսությունների տեսակարար կշիռներն ըստ մարզերի



Աղյուսակ 7. Ֆիզիկական անձի կարգավիճակով տնտեսությունները որոնք զբաղվում են խաղողի մշակմամբ *(միավոր)*

	Ընդամենը ՀՀ	այդ թվում՝										
		ք. Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ
Խաղողի այգի (առանց տնկարանի), ընդամենը.	66518	2282	4147	21568	19443	11	581	2205	26	1180	4437	10638
տեխնիկական	31111	173	2815	7728	6361	11	227	1125	15	831	3066	8759
սեղանի	35203	1814	1643	13227	14666	1	206	569	9	290	1967	812
ունիվերսալ	10837	409	728	4439	1086	-	188	618	3	84	1701	1581

Աղյուսակ 8. Իրավաբանական անձի կարգավիճակով տնտեսությունները որոնք զբաղվում են խաղողի մշակմամբ, ըստ տեսակների

(միավոր)

	Ընդամենը ՀՀ	*այդ թվում՝*										
		ք. Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ
Խաղողի այգի (առանց տնկարանի), ընդամենը.	26	3	4	4	6	-	2	-	-	-	5	2
տեխնիկական	22	2	4	2	6	-	2	-	-	-	5	1
սեղանի	1	-	-	-	1	-	-	-	-	-	-	-
ունիվերսալ	4	1	-	2	-	-	-	-	-	-	-	1

ՀՀ-ում խաղողագործությամբ զբաղվող 66,5 հազար գյուղացիական տնտեսություններից, տեխնիկական սորտերի մշակմամբ են զբաղվում ավելի քան 31 հազար գյուղացիական տնտեսություն, սեղանի սորտերի մշակմամբ՝ շուրջ 35 հազար գյուցիական տնտեսություն և ունիվերսալ սորտերի մշակմամբ՝ 11 հազար գյուղացիական տնտեսություն[2]:

2.4. Խաղողի տեսակները

Խորհրդային տարիներին Հայաստանում մշակվում էին հիմնականում տեխնիկական սորտի խաղողներ, որոնք միջին հաշվով կազմում էին ՀՀ-ում արտադրված խաղողի մինչև 95%-ը: Ներկայումս խաղողի համախառն բերքի, ինչպես նաև խաղողի տարածությունների կառուցվածքն ըստ խաղողի օգտագործման ուղղությունների ունի հետևյալ պատկերը: Տեխնիկական սորտի խաղողները կազմում են ընդամենը խաղողի 73,8%-ը, սեղանի սորտինը՝ 18,4%-ը և ունիվերսալ սորտինը՝ 7,8%-ը:

Նկար 8. ՀՀ-ում և մարզերում խաղողի այգիների տարածություններն ըստ տեսակների, %



[2] Ըստ տեսակների տնտեսությունների քանակի հանրագումարը գերազանցում է խաղողագործությամբ զբաղվող տնտեսությունների քանակին, քանզի խաղողագործությամբ զբաղվող 1 տնտեսությունը կարող է զբաղվել տարբեր տեսակի խաղողի սորտերի մշակմամբ:

Աղյուսակ 9. Ֆիզիական անձի կարգավիճակով տնտեսություններում խաղողի այգիների տարածություններն ըստ տեսակների

(հա, 0.00 ճշտությամբ)

	Ընդամենը ՀՀ	*այդ թվում՝*										
		ք. Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ
Խաղողիայգի (առանց տնկարանի), ընդամենը.	**14137.64**	**48.06**	**1516.84**	**4301.70**	**5626.34**	**1.59**	**76.96**	**390.40**	**0.48**	**58.89**	**805.17**	**1311.21**
որից՝ բերքատու հասակի	12626.59	27.41	1188.37	4181.45	5029.74	0.13	57.54	175.68	0.41	50.53	685.37	1229.96
այդթվում՝												
տեխնիկական	10408.92	12.47	1114.30	2646.04	4407.68	1.57	45.42	302.02	0.18	52.60	625.12	1201.53
որից՝ բերքատու հասակի	9112.41	3.31	794.57	2566.04	3908.93	0.11	29.51	89.53	0.14	44.40	551.18	1124.70
սեղանի	2637.51	31.10	161.87	1204.48	1070.78	0.01	18.59	13.59	0.27	5.17	95.63	36.01

որից՝ բերքատու հասակի	2451.02	19.96	156.13	1178.73	976.49	0.01	15.65	12.44	0.26	5.04	51.10	35.22
ունիվերսալ	1091.20	4.49	240.66	451.19	147.88	-	12.94	74.79	0.03	1.12	84.42	73.68
որից՝ բերքատու հասակի	1063.16	4.13	237.67	436.68	144.32	-	12.39	73.72	0.02	1.09	83.09	70.04

ՀՀ-ում մշակվող խաղողի սորտերն ըստ ուղությունների բերված են ստորև:

Հայաստանի Հանրապետությունում մշակվող խաղողի սորտերն ըստ օգտագործման նպատակի

1. **Տեխնիկական սորտեր՝** Ռքաձիթելի, Կանգուն, Արենի, Ոսկեհատ, Մեղրաբույր, Բանանց, Հաղթանակ, Գառան դմակ, Կարմրահյութ, Մոլդովական, Ներկենի, Տիգրանի, Կարմիր Կախեթ, Սափերավի, Արևիկ, Ալդարա, Անթեյ, Կարաբուրնու, Իզաբելլա, Պինո սև, Ալիգոտե, Շարդոնե, Սիրահ, Մեռլոտ, Անչելլոտտա, Կաբերնե ֆրան, Կաբերնե սովինյոն, Շենին, Կոլոմբարդ, Կոտ Ն.Մալբեկ, Ֆոլ Բլանշ, Մալբեկ, Մառսելան, Մելլոտ, Մոնտեպուլչիանո, Մուսկաթ օտտոնել, Պետիտ վեռդոն, Պինո գրի, Ռեդ գլոբ, Սովինյոն բլանշ, Թաննատ, Ուգնի բլանք, Վիոնիեռ:

2. **Սեղանի սորտեր՝** Սպիտակ, Երևանի վարդագույն, Սև քիշմիշ, Մուսկատ Երևանի, Իծապտուկ, Հայրենիք, Շահումյանի, Կարդինալ, Արարատի, Թավրիզենի, Արմենիա, Բուլղար, Լալվար, Հայաստան, Թայֆի վարդագույն, Պադարոկ Ռոսիի, Միսիթարի, Մեղրու վաղահաս, Այվազյանի խոշորապտուղ:

3. **Ունիվերսալ սորտեր՝** Մսխալի, Անահիտ, Վանի, Մուսկատ Սուսաննա, Կախեթ:

Ցավոք սրտի ըստ առանձին սորտերի ուղղվածության խաղողի տարածությունների և համախառն բերքի վերաբերյալ տվյալները ներկայումս ՀՀ-ում բացակայում են, քանզի դրա համար անհրաժեշտ է իրականացնել առանձին հետազոտություն կամ հաշվառում:

2.5. Խաղողագործական տնտեսությունների չափերը

Խաղողագործությամբ զբաղվող տնտեսություններից 46 հազարը զբաղվում է խաղողի աճեցմամբ նաև իրենց տնամերձ հողերում:

ՀՀ-ում խաղողի արտադրությամբ զբաղվող ավելի քան 66 հազար տնտեսությունների գերակշիռ մեծամասնությունը՝ ավելի քան 40 հազար տնտեսությունները խաղողագործությամբ են զբաղվում մինչև 0,1 հեկտար հողատարածության վրա:

Աղյուսակ 10. Ֆիզիկական անձի կարգավիճակով տնտեսություններն ըստ խաղողի այգիների (ներառյալ տնկարանները) տարածությունների չափերի

(միավոր)

	Տնտեսություններ, ընդամենը	*այդ թվում՝ ըստ տարածությունների չափերի (հա)*												
		մինչև 0.1	0.1-0.19	0.2-0.49	0.5-0.99	1-1.99	2-2.99	3-4.99	5-9.99	10-19.99	20-49.99	50 -99	100-199	200 և ավելի
Հայաստանի Հանրապետություն, ընդամենը	**66565**	**40636**	**7145**	**11110**	**5778**	**1541**	**221**	**86**	**34**	**11**	**3**	**-**	**-**	**-**
այդթվում՝														
ք. Երևան	2282	2220	11	25	26	-	-	-	-	-	-	-	-	-
Արագածոտն	4160	1490	616	1076	596	289	78	14	1	-	-	-	-	-
Արարատ	21584	12958	1530	4382	2206	420	48	23	12	3	1	-	-	-
Արմավիր	19455	12621	1256	2739	2013	675	82	46	14	7	2	-	-	-
Գեղարքունիք	11	8	1	1	1	-	-	-	-	-	-	-	-	-

Լոռի	581	463	35	42	26	16	-	-	-	-	-	-	-	-
Կոտայք	2207	1470	193	310	207	22	1	-	5	-	-	-	-	-
Շիրակ	26	26	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Սյունիք	1181	1010	63	83	21	4	-	-	-	-	-	-	-	-
Վայոց Ձոր	4439	2616	780	732	268	38	1	1	1	1	-	-	-	-
Տավուշ	10639	5753	2661	1721	413	77	10	1	1	-	-	-	-	-

Ինչից ելնելով կարելի է փաստել, որ այդ տնտեսությունները հիմնականում խաղող են մշակում իրենց տնամերձ հողերում կամ շատ փոքր հողակտորների վրա, որոնք գտնվում են դաշտերում: 1 հա և ավելի հողակտոր ունեցող տնտեսությունների քանակն ընդամենը խաղողագործությամբ զբաղվող տնտեսությունների կազմում մոտ 3% է, ինչը վկայում է խաղողագործության ոչ բարձր մեքենայացման մակարդակի և ցածր արդյունավետության մասին: 5 և ավելի հա խաղողի այգի ունեցող տնտեսությունների քանակը ՀՀ-ում կազմում է ընդամենը 34 տնտեսություն: ՀՀ-ում խաղողի այգիների տարածություններն ըստ չափերի ունեն հետևյալ պատկերը՝ մինչև 1 հա խաղողի այգիների տարածություններն ընդամենը խաղողի տարածություններում կազմում են շուրջ 73%-ը:

Նկար 9. Խաղողի մշակությամբ զբաղվող տնտեսություններն ըստ խաղողի այգիների տարածությունների չափերի



Նկար 10. Խաղողի մշակությամբ զբաղվող տնտեսություններում խաղողի այգիների տարածություններն ըստ չափերի



Աղյուսակ 11. Ֆիզիկական անձի կարգավիճակով տնտեսություններում խաղողի այգիների (ներառյալ տնկարանները) տարածություններն ըստ չափերի

(հա, 0.00 ճշտությամբ)

	Տնտեսություններ, ընդամենը	*այդ թվում՝ ըստ չափերի (հա)*												
		մինչև 0.1	0.1-0.19	0.2-0.49	0.5-0.99	1-1.99	2-2.99	3-4.99	5-9.99	10-19.99	20-49.99	50 -99	100-199	200 և ավելի
Ընդամենը ՀՀ	**14186.89**	**1152.99**	**997.98**	**3860.43**	**4384.23**	**2340.88**	**540.22**	**351.86**	**308.38**	**148.09**	**101.84**	**-**	**-**	**-**
այդթվում՝														
ք. Երևան	48.06	25.36	1.24	5.68	15.78	-	-	-	-	-	-	-	-	-
Արագածոտն	1520.26	41.20	95.87	388.20	409.16	356.59	180.94	42.80	5.50	-	-	-	-	-
Արարատ	4308.71	247.26	225.53	1502.43	1447.84	532.04	108.62	86.52	85.73	38.69	34.04	-	-	-
Արմավիր	5648.22	491.79	198.23	1100.51	1839.35	1251.72	222.88	214.15	165.41	96.40	67.80	-	-	-
Գեղարքունիք	1.59	0.17	0.10	0.49	0.82	-	-	-	-	-	-	-	-	-
Լոռի	76.96	8.76	6.38	13.63	20.87	27.32	-	-	-	-	-	-	-	-
Կոտայք	405.71	23.65	25.96	120.82	167.26	31.51	2.07	-	34.44	-	-	-	-	-
Շիրակ	0.48	0.48	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-

Սյունիք	59.03	16.16	7.53	20.16	11.75	3.43	-	-	-	-	-	-	-	-
Վայոց Ձոր	806.12	142.13	108.47	246.75	224.07	53.71	3.34	5.21	9.44	13.00	-	-	-	-
Տավուշ	1311.75	156.03	328.67	461.77	247.32	84.56	22.37	3.18	7.86	-	-	-	-	-

1 և ավելի հա այգիների տարածություններն ընդամենը խաղողի այգիների տարածություններում կազմում է շուրջ 27% և ըստ էության, միայն այս տնտեսություններում է կարելի կազմակերպել խաղողի բարձր արդյունավետությամբ արտադրություն:

2.6. Խաղողի ապրանքայնության մակարդակը

ՀՀ-ում գուղատնտեսական արտադրանքի շարքում խաղողի ապրանքայնության մակարդակը համարվում է ամենաբարձրներից մեկը և կազմում է շուրջ 90%:

Նկար 11. Խաղողի ապրանքայնության մակարդակի փոփոխություններն ըստ ՀՀ-ի և խաղողագործական հիմնական մարզերի, %



Աղյուսակ 12. Խաղողի ապրանքայնության մակարդակը[3]

(տոկոսներով)

	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Ընդամենը ՀՀ	**89.7**	**85.1**	**85.6**	**80.3**	**80.8**	**90.1**	**90.0**
Արագածոտն	94.0	95.1	92.5	90.8	90.8	94.0	65.0
Արարատ	82.1	83.8	85.1	87.0	86.2	91.2	90.5
Արմավիր	96.4	92.7	88.6	77.7	79.2	95.3	95.8
Գեղարքունիք	-	-	-	-	-	-	-
Լոռի	35.7	37.0	37.7	27.8	2.2	5.4	4.1
Կոտայք	34.1	-	-	33.3	13.3	18.3	0.9
Շիրակ	-	-	-	-	-	-	-
Սյունիք	49.4	10.4	23.7	6.1	3.3	5.8	2.5
Վայոց Ձոր	80.6	73.6	90.4	88.2	88.7	73.9	67.6
Տավուշ	46.0	58.1	66.4	66.1	70.3	71.5	50.3

Խաղողի ապրանքայնությունը հաշվարկվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման դաշտում ընդգրկված հանրապետության բոլոր մարզերի շուրջ 189 համայնքների գյուղական բնակավայրերի (յուրաքանչյուր համայնքի համար ընտրանքի չափ է ընտրված 40 անհատական (գյուղացիական) տնային տնտեսություն) շուրջ 7560 անհատական (գյուղացիական) տնային տնտեսություններից յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի դրությամբ հավաքագրված վիճակագրական տվյալների հիման վրա:

[3] Գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնության մակարդակն իրենից ներկայացնում է տնտեսության կողմից վաճառված, ապրանքափոխանակման և ծառայությունների դիմաց բնամթերքով տրված ծավալների տեսակարար կշիռների հանրագումար:

Այս ցուցանիշն, ըստ մարզերի խիստ տարբերվում է կապված խաղողի արտադրության ծավալների հետ և այդ մարզերում տեղակայված վերամշակող կազմակերպությունների առկայության հետ: Խաղողը իրացվում է հիմնականում վերամշակող կազմակերպություններին (կոնյակ, գինի և այլ նույնատիպ արտադրանք արտադրող) և շուկաներում թարմ սպառման համար: Խաղողի այգու հիմնման ծախսեր:

2.7. Արտադրական գործընթացը

Տարածքի ընտրություն և հողի պատրաստում

Խաղողի այգու հիմնման տեսանկյունից կարևորվում են ինչպես տեղանքի ընտրությունն այնպես էլ առաջնային այգու հիմնմանը միտված որոշ աշխատանքների իրականացումը: Այգու տեղն ընտրելիս, որպես կանոն, հաշվի են առնվում բնակավայրից հեռավորությունը, հողի դիրքը, որակը, ճանապարհների և ոռոգման առկայությունը և այլն: Այգին հիմնելուց առաջ իրականացվում են մի շարք աշխատանքներ, դրանք են.

- հողի նախապատրաստում - հիմնաշրջում, քարհավաք, հիմնական պարարտացում, վար, չիզել, հարթեցում, հողամասի տեղաձևում, տնկման փոսերի պատրաստում և այլն,
- տնկանյութի ձեռք բերում, տեղափոխում, տնկում, ջրում, միջշարքային տարածությունների փխրեցում, պարարտացում և այլն:

Այնուհետև իրականացվում են համակարգված այլ աշխատանքներ, որոնք անհրաժեշտ են նոր հիմնված այգու մշակման համար:

Պարարատանյութեր և թունաքիմիկատներ

Խաղողի աճեցման համար, ինչպես և մյուս գյուղատնտեսական մշակաբույսերի պարագայում, պարտադիր բաղադրիչ են հանդիսանում գիտականորեն կազմված և իրականացվող ագրոտեխնիկական միջոցառումները: Դրանց կիրառման ամբողջականությունից են մեծապես կախված ստացվող բերքի ծավալները, դրա ինքնարժեքը և այլն: Նշված միջոցառումների բաղկացուցիչ մաս են հանդիսանում խաղողի այգիների ժամանակին և ամբողջական պարարտացումը, ինչպես նաև վնասատուների դեմ պայքարի միջոցները: Ինչ վերաբերում է պարարատանյութերին, ապա ՀՀ-ում խաղողի այգիների պարարտացման համար օգտագործում են ինչպես հանքային այնպես էլ օրգանական պարարտանյութեր: Որպես հանքային պարարտանյութ Հայաստանում տնտեսություններն օգտագործում են հիմնականում ազոտական պարարտանյութերը՝ ամոնիկակային սելիտրա: Մյուս հանքային պարարտանյութերից տնտեսություններն օգտագործում են ֆոսֆորական՝ սուպերֆոսֆատը և կալիումական պարարտանյութեր որոնք օգտագործում են չափազանց

քիչ թվով տնտեսություններ: Վերջին տարիներին հանրապետությունում տնտեսությունները սկսել են կիրառել արտարմատային (տերևային) պարարտացում ինչն ըստ տնտեսվարողների բավականին արդյունավետ է: Ինչ վերաբերում է օրգանական պարարտանյութերին, ապա այն ըստ էության սահմանափակվում է գոմաղբով: ՀՀ-ում խաղողի այգիները պարարտացնում են հիմնականում ակոսային եղանակով, մասամբ էլ մերձբնային եղանակով: Այգիների պարարտացումը գոմաղբով մեծամասամբ կատարվում է աշնանը, իսկ ազոտական պարարտանյութերը բույսերին տրվում են վեգետացիայի ընթացքում: Ազոտական պարարտանյութերը տնտեսությունները ձեռք են բերում հիմնականում մեծածախ և մանրածախ առևտրի կենտրոններից:

Պայքար մոլախոտերի և հիվանդությունների դեմ

Մոլախոտերի դեմ պայքարը, որպես միջոցառում, հիմնականում միտված է վազերի աճը բարելավելուն և բերքատվությունն ավելացնելուն: Հիմնականում մոլախոտերի դեմ պայքարում են նոր այգիների հիմնման ժամանակ, երբ դրանք դեռ երիտասարդ այգիներ են, քանզի բերքատու տարիքին հասնելուն զուգահեռ, որպես կանոն, ՀՀ-ում տնտեսությունների կողմից մոլախոտերի դեմ պայքարի ինտենսիվությունը նվազում է, քանի որ վազերի աճին զուգահեռ պակասում է միջվազային տարածություններում ընկնող արևի չափաբաժինը, ավելանում է այգիներում ստվերում գտնվող հողերի հատվածը, ինչն էլ մասամբ դժվարացնում է մոլախոտերի աճն ու զարգացումը: Մոլախոտերի դեմ պայքարի համակարգն իր մեջ ներառում է տարբեր մոտեցումների և միջոցառումների համատեղում: Այն կարող է ուղղված լինել ինչպես մոլախոտերի աճի կանխարգելմանը, այնպես էլ դրանց ոչնչացմանը:

Ներկայումս Հայաստանում տարածված են խաղողների սնկային հիվանդությունները, ինչը բավականին դժվարեցնում է դրանց դեմ պայքարը: ՀՀ-ում առավել տարածված են խաղողի այնպիսի հիվանդություններ ինչպիսիք են ֆիլոքսերան (որդալվիճ), միլդիումը (չոռ) և օիդիումը (սև) և այլն: Ներկայումս ՀՀ-ում առկա են բոլոր տեսակի գյուղատնտեսական մշակաբույսերի, այդ թվում խաղողի, բոլոր հանդիպող հիվանդությունների դեմ պայքարի միջոցները: Սակայն, համաձայն հարցվող տնտեսությունների բուժանյութերի որակը հիմնականում գնահատվել են վատ կամ շատ վատ:

Մեքենայացում

Հայաստանի Հանրապետությունում խաղողի այգիների մշակման աշխատանքները մասամբ մեքենայացված են, այսպես՝ այգիների միջշարքային տարածությունների վարն ու փխրեցումը, բուժումն իրականացվում են հիմնականում մեքենայացված եղանակով: Հարցված տնտեսություններից, ըստ էության, բոլորը վերը նշված աշխատանքները իրականացնում են մեքենայացված եղանակով: Մյուս բոլոր աշխատանքները՝ այգեթաղ, այգեբաց, էտ, այգեկապ, բերքահավաք և այլն, որպես կանոն իրականացվում են ձեռքով: Ինչ

վերաբերում է փոքր տնտեսություններին, ապա դրանցում, ըստ էության, բոլոր աշխատանքներն են կատարվում ձեռքով:

Ոռոգում

Հայաստանի Հանրապետությունում խաղողի մշակությունն իրականացվում է բացառապես ոռոգման պայմաններում: Կապված բնակալիմայական պայմաններից դրանք անշուշտ տարբերվում են, սակայն կիրառվող ոռոգման եղանակներն ըստ էության նույնն են խաղողի մշակությամբ զբաղվող բոլոր մարզերի տնտեսություններում: Խաղողի այգիների ոռոգման ամենաընդունված և կիրառվող ձևը դա մակերեսային ջրումն է, խաղողի մշակության պարագայում՝ ակոսային տարբերակը: Ոռոգման այս եղանակը ՀՀ-ում կիրառվում է վաղուց և ըստ էության զգալի փոփոխությունների չի ենթարկվել: Այն ունի մի շարք թերություններ, որոնցից կարևորը ջրի մեծ կորուստն է, ինչն իր բացասական ազդեցությունն է թողնում խաղողի ինքնարժեքի վրա: Ներկայումս ՀՀ-ում աշխատանքներ են տարվում այն ուղղությամբ, որ անցում կատարվեն ոռոգման առավել ժամանակակից և արդյունավետ մեթոդներին, մասնավորապես՝ կաթիլային ոռոգմանը, ինչը կնպաստի խաղողի ինքնարժեքի իջեցմանը և որպես հետևանք՝ տնտեսվարողների շահույթի ավելացմանը:

Այգիների հիմնում

ՀՀ-ում խաղողի նոր այգիների հիմնման ժամանակ, որպես կանոն օգտագործվում են տեղական արտադրության շիվեր (արմատակալներ): Միաժամանակ, մասնավորապես 90-ական թվականների կեսերից, ՀՀ սկսեցին ներկրվել նաև տնկանյութեր, հիմնականում Եվրոպայից: Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը տնտեսվարողները նոր այգիներ հիմնելու համար տնկանյութ են ձեռք բերում այլ տնտեսվարողներից, որոնք կարելի է ասել մասնագիտացված են տնկանյութի աճեցման գործում, որոնք անհրաժեշտ քանակի և սորտի արմատակալներ են աճեցնում հիմնականում միայն համապատասխան պատվերի առկայության դեպքում: Տնտեսությունները հիմնականում գոհ են տնկանյութի որակից, դրանք ունենում են բարձր կպչողականություն և մշտապես (չնչին բացառություններով) համապատասխանում են իրենց կողմից պահանջված սորտերին: Հարցված տնտեսություններից միայն երեքն են դժգոհել արմատակալների որակից:

Բերքահավաք

Խաղողի բերքահավաքը ՀՀ-ում իրականացվում է հիմնականում սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին, այն համարվում է խաղողի արտադրության կազմակերպման

ամենակարևոր աշխատանքներից մեկը: ՀՀ-ում խաղողի բերքահավաքն իրականացվում է ձեռքով: Հանրապետությունում խաղողի բերքահավաքի կազմակերպման համար կարևոր է ոչ միայն ճիշտ որոշել բերքահավաքի պահը (ժամանակահատվածը) կապված վեգետացիայից, այն է հասունացման ճիշտ պահը, այլ նաև համապատասխանեցնել բերքահավաքը վերամշակող կազմակերպությունների գնման գործառույթի՝ ընթացքի, ժամանակացանկին: Այսինքն չնայած նրան, որ վերամշակող կազմակերպությունների և տնտեսվարող միավորների միջև առկա են լինում պայմանագրեր, հանդիպում են բազմաթիվ դեպքեր երբ թե ժամանակային առումով և թե գնման գների առումով այդ պայմանավորվածությունները խախտվում են: Որպես կանոն համեմատաբար մեծ խաղողի այգիների տարածություններ ունեցող տնտեսություններում խաղողի բերքահավաքը կատարվում է ինչպես տնտեսության անդամների, այնպես էլ վարձու աշխատողների ուժերով: Խաղողը հենց այգում, բերքահավաքի ընթացքում, բեռնվում է համապատասխան մեքենաներ և տեղափոխվում մթերման կետեր:

2.8. Խաղողի այգի հիմնելու ծախսերը

Փորձագետների հետ կապված հարցումների արդյունքներով, Հայաստանում 1 հա խաղողի այգի հիմնելու համար անհրաժեշտ է մոտ 3.3 մլն. դրամ, որից 1.5 մլն. դրամ՝ այգու հիմնման և առաջին տարում խնամքի համար, իսկ 1.8 մլն. դրամը՝ շպալերային համակարգի ձևավորման համար:

Ստորև ներկայացվում է 1 հա խաղողի այգու հիմնման ծախսերի հաշվարկն ըստ խաղողի այգու հիմնման 2 փուլերի:

Աղյուսակ 13. 1 հեկտար խաղողի այգու տարածքի նախապատրաստման, այգու հիմնման և առաջին տարվա խնամքի աշխատանքների համար պահանջվող ծախսերը

Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Ֆիզիկական ծավալները	Միավորի արժեքը, դրամ	Ընդամենը ծախսեր, հազ.դրամ
Հիմնաշրջում	հա	1	80000	80.0
Քարհավաք	մարդ/օր	6	5000	30.0
Հիմնական պարարտացում	հա	1	40000	40.0

Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Ֆիզիկական ծավալները	Միավորի արժեքը, դրամ	Ընդամենը ծախսեր, հազ.դրամ
Վար	հա	1	40000	40.0
Չիզել	հա	1	25000	25.0
Հարթեցում	հա	1	40000	40.0
Հողամասի տեղաձևում	հա	1	25000	25.0
Տնկման փոսերի պատրաստում	հատ	2750	50	137.5
Տնկանյութի արժեք	հատ	2750	100	275.0
Տնկանյութի նախապատրաստում և տեղափոխում	հատ	2750	10	27.5
Տնկում	մարդ/օր	10	5000	50.0
Ջրում 15 անգամ	հազ.մ³	9	11000	99.0
Ջրվորիաշխատավարձ	մարդ/օր	15	5000	75.0
Միջշարային տարածությունների փխրեցում (2 անգամ)	հա	2	25000	50.0
Միջվազային տարածությունների քաղհան-փխրեցում ձեռքով (3 անգամ)	մարդ/օր	36	5000	180.0
Սնուցում 1 անգամ	մարդ/օր	6	5000	30.0
Պայքար հիվանդությունների դեմ (2 անգամ)	հա	2	20000	40.0
Այգեթաղ	մարդ/օր	10	5000	50.0

Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Ֆիզիկական ծավալները	Միավորի արժեքը, դրամ	Ընդամենը ծախսեր, հազ.դրամ
Թունանյութեր				60.0
Պարարտանյութեր				90.0
այդթվում՝				
Ամոնիակային սելիտրա	կգ	50	120	6
սուպերֆոսֆատ	կգ	400	140	56.0
Կալիում ականաղ	կգ	200	140	28.0
Չնախատեսված այլ աշխատանքներ և ծախսեր				90.0
Հողի հարկ				0
Ընդամենը				**1534.0**

Աղյուսակ 14 . 1 հեկտար երիտասարդ խաղողի այգում սյուների (շպալերայի) հիմնման համար պահանջվող ծախսերը

Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Ֆիզիկական ծավալները	Միավորի արժեքը, դրամ	Ընդամենը ծախսեր, հազ.դրամ
Սյուների (շպալերայի) փոսերի պատրաստում (հորատիչով)	հատ	593	200	118.0
Գլխասյուների ու խարսխասյուների փոսերի պատրաստում	հատ	148	200	29.6
Գլխասյուների ու խարսխասյուների տեղափոխում, տնկում և ամրացում	հատ	148	200	29.6
Սյուների (շպալերայի) տեղափոխում և տնկում	հա	593	150	88.95
Լարերի անցկացում և ձգում	մարդ/օր	6	7000	42.0
Գլխասյուների և խարսխասյուների արժեքը	հատ	148	2400	355.2
Սյուների (շպալերայի) արժեքը	հատ	593	1300	770.9
Մետաղալար	կգ	500	650	325.0
Ընդամենը սյուների հիմնման ծախսերը				**1759.25**

2.9. Խաղողի գները

Ուսումնասիրվող տարիներին վերամշակող կազմակերպությունների կողմից խաղողի 1 կգ-ի գնման գներն աճել են: Այսպես՝ 2010թ. 1 կգ խաղողի գնման միջին գինը կազմել է 124 դրամ այն դեպքում, երբ 2015թ. այն կազմել է շուրջ 145 դրամ, իսկ 2016թ.՝ 130 դրամ: Ինչ վերաբերում է գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված խաղողի 1 կգ-ի միջին գնին, ներառյալ վերամշակող կազմակերպություններին վաճառածը, ապա այն ըստ վերջին 10 տարիների տվյալների, տատանվում է և չունի հստակ արտահայտված աճի կամ անկման միտում: 2010թ.-ին 1 կգ խաղողի իրացման գինը կազմել է 206 դրամ, 2013թ.՝ մոտ 175 դրամ, իսկ 2016թ.-ին՝ 190 դրամ:

2016թ. վերամշակող կազմակերպությունների կողմից գնվել է շուրջ 110 հազ տոննա խաղող կամ ընդամենը ՀՀ-ում արտադրված խաղողի համախառն բերքի ավելի քան 61 %-ը,իսկ 2015թ.՝ 217 հազար տոննա կամ ընդամենը ՀՀ-ում արտադրված խաղողի համախառն բերքի ավելի քան 70 %-ը, 2010թ.՝ 135 հազար տոննա կամ ընդամենը ՀՀ-ում արտադրված խաղողի համախառն բերքի ավելի քան 61 %-ը: Վերամշակող կազմակերպությունների կողմից 2016թ. խաղողի գնման ծավալների նվազումը (շուրջ 50%-ով) հիմնականում պայմանավորված է 2015թ. արտադրված արտադրանքի (գինի, օղի, կոնյակ) իրացման հետ կապված խնդիրներով, ինչպես նաև 2016թ. ՀՀ-ում արտադրված խաղողի համախառն բերքի ծավալի նվազմամբ:

2.10. Ընտրանքային հարցում

ՀՀ-ում խաղողագործության զարգացման հեռանկարները կանխատեսելու և գնահատելու նպատակով 2017թ. հանրապետության հինգ մարզերի 12 համայնքներում (համայնքների ցանկը և նրանցում հարցված տնտեսությունների թիվը բերված է Հավելված 1-ում) իրականացվել է խաղողագործությաբ զբաղվող տնտեսությունների՝ 126 միավոր, հարցումներ (հարցաթերթիկը բերված է Հավելված 2-ում):

Գյուղական համայնքների և տնտեսությունների ընտրությունն իրականացվել է հետազոտությունն իրականացնող թիմի կողմից: Ընտրվել են մարզի խաղողագործական համեմատաբար մեծ համայնքները և նրանցում խաղողագործությամբ զբաղվող տարբեր չափերի տնտեսություններ: Տնտեսությունների ընտրությունը կատարվել է շերտադասային մեթոդով՝ պատահականության սկզբունքով:

Դաշտային աշխատանքներն իրականացրել են նմանատիպ աշխատանքների երկարամյա փորձ ունեցող մասնագետները:

Աղյուսակ 15. Ամփոփ տեղեկատվություն հարցումներով ընդգրկված տնտեսությունների վերաբերյալ

	Հարցված համայնքների թիվը	Հարցված տնտեսություն-ների թիվը	Հարցված տնտեսություն-ների անդամների միջին թիվը	Բարձրագույն կրթությամբ գլխավորների թիվը	1 տնտեսության սեփական հողի միջին չափը	1 տնտեսության վարձակալված հողի միջին չափը	Սեփականաշնորհված խաղողի այգիների տարածությունը հարցված միջին 1 տնտեսության հաշվով	Առկա խաղողի այգիների տարածությունները հարցված միջին 1 տնտեսության հաշվովը, հա
	համայնք	տնտեսություն	անդամ	%	հա	հա	հա	հա
Արագածոտն	2	21	6.0	19.0	2.3	0.32	0.56	0.89
Արարատ	3	31	5.0	61.3	2.7		0.09	2.01
Արմավիր	3	31	5.0	25.8	11.4	0.11	0.31	7.78
Վայոց Ձոր	2	21	4.8	23.8	1.1		0.15	1.06
Տավուշ	2	22	5.5	27.3	1.6	0.36	0.76	0.75
Ընդամենը	12	126	5.2	33.3	4.3	0.14	0.35	2.86

Հարցմանը մասնակցած տնտեսություններից 15-ը կամ 12%-ը սեփականաշնորհումից հետո գնել է խաղողի այգի և ոչ մի տնտեսություն խաղողի այգի չի վաճառել: Համեմատաբար շատ խաղողի այգիներ են գնել Վայոց ձորի մարզի տնտեսությունները: Խաղողի նոր այգիներ են հիմնել 58 տնտեսութուն կամ հարցմանը մասնակցած տնտեսությունների 46%-ը: Հիմնված նոր այգիները կազմում են մոտ 278 հա: Խաղողի այգիների տարածություններ ընդլայնելու ցանկություն են հայտնել 50 տնտեսություն, որոնցից 24-ը ցանկանում են գնել խաղողի այգիներ, իսկ 26-ը հիմնել նոր այգիներ: Հարցվող տնտեսություններից միայն չորսն են քանդել իրենց պատկանող այգիները: Համաձայն հարցումների տնտեսությունները իրենց խաղողի այգիները ոռոգվում են ակոսային եղանակով:

Համաձայն հարցման 2016թ. հարցվող տնտեսություններում արտադրվել է 5467 տոննա խաղող, որից խաղողի վերամշակմամբ զբաղվող կազմակերպություններին և ֆիզիկական անձանց վաճառվել է 5401 տոննա, այլ սպառողներին՝ 38 տոննա: Տնտեսությունում վերակմշակված խաղողի 55,5 %-ը նախատեսված է եղել օղի ստանալու համար, 38,2 %-ը՝ գինի ստանալու համար: Հարցված տնտեսություններից՝ 126 միավոր, միայն 15-ը ունեն խաղողի պահպանման համար նախատեսված սառնարաններ, որոնց ընդհանուր ծավալը կազմում է ընդամենը 555 խորանարդ մետր: Հատկանշական է, որ այդ բոլոր տնտեսությունները գտնվում են Արարատի մարզում:

Հարցմանը մասնակցած տնտեսութունները, որպես խաղող արտադրողներ, զգալիորեն տարբերվում են միմյանցից արտադրության կազմակերպման առանձնահատկություններով, որոնց հիմքում ընկած են մի շարք պատճառներ: Այդ առանձնահատկությունները պայմանավորված են տնտեսությունների մասնագիտացմամբ, չափերով, խաղողի արտադրության կազմակերպման և վարման մշակույթով, ֆինանսական հնարավորություններով, իրացման առանձնահատկություններով, տնտեսութունների աշխարհագրական տեղաբաշխմամբ՝ բնակլիմայական պայմաններ և այլն:

2.11. Խաղողի արտադրության ծախսերը

Վերը նշված առանձնահատկությունները իրենց ազդեցությունն են թողնում նաև խաղողի արտադրության համար կատարված ծախսերի ձևավորման և չափերի վրա: Այսպես, եթե Արարատի, Արմավիրի և մասամբ Վայոց ձորի մարզերի հետազոտվող տնտեսությունները խաղողի արտադրության նպատակով գրեթե բոլոր աշխատանքներն

իրականացնելիս օգտվել են վարձու աշխատողների օժանդակությունից (համապատասխան վճարի դիմաց), ապա Արագածոտնի և Տավուշի մարզերի տնտեսությունները բացառությամբ՝ այգիների սրսկման, բերքահավաքի, բերքի տեղափոխման և այգեթաղի աշխատանքներից, վարձու աշխատողների օժանդակությունից չեն օգտվել: Ըստ մարզերի և հարցված տնտեսությունների, վարձու աշխատողների ներգրավվածությունը խաղողի արտադրության աշխատանքներին, տարբերվում են նաև, թե տևողության առումով և թե վճարի առումով: Սրանով էլ պայմանավորված, տնտեսությունների կողմից խաղողի արտադրության վրա կատարված ծախսերն ըստ մարզերի և տնտեսությունների զգալիորեն տարբերվում են միմյանցից: Եթե հարցմանը մասնակցած բոլոր տնտեսութունների կողմից խաղողի արտադրության նպատակով վարձու աշխատողներին տրված վճարումների և այլ ծախսերի հանրագումարը պայմանականորեն համարենք արտադրության վրա կատարված դրամական ծախսեր կամ ինքնարժեք, ապա 1 կգ խաղողի արտադրության վրա ծախսը միջին հաշվով կկազմի շուրջ 63 դրամ, սակայն առավել ամբողջական ինքնարժեք հաշվարկելու համար կարծում ենք ինքնարժեքը պետք է հաշվարկել ներառելով նաև տնտեսության անդամների կողմից կատարված աշխատանքը գնահատելով: Այս նպատակով անհրաժեշտ է սեփական աշխատանքի վարձատրությունը հաշվարկել հիմք ընդունելով վարձու աշխատողների նույնանման աշխատանքի դիմաց կատարված վարձատրությունը: Դա հաշվարկելու համար հիմք է ընդունվել աշխատանքների վարձու աշխատողների կողմից կատարված աշխատանքի տեսակարար կշիռը և դրա դիմաց կատարած վճարումը:

Վերը նշված մեթոդաբանությամբ կատարված ինքնարժեքի հաշվարկման արդյունքում ամբողջական ինքնարժեքի 1 կգ խաղողի հաշվով կկազմի շուրջ 90 դրամ: Այսպիսով,վերը նշված երկու ինքնարժեքների տարբերության գործակիցը կկազմի 1,43 (90/63): Ինքնարժեքների հաշվարկների և դրանց մեծությունների թե հետազոտվող մարզերի և թե տնտեսությունների կտրվածքով հարկ է վերաբերվել որոշակի վերապահումներով, քանզի անգամ նույն մարզի միևնույն համայնքում, հարցվող տնտեսություններում, վարձու աշխատողների կողմից կատարված աշխատանքի, միևնույն աշխատանքը կատարելու առումով, տեսակարար կշիռը խիստ տարբերվում են միմյանցից, զգալիորեն տարբերվում են նաև վարձու աշխատողներին միևնույն աշխատանքը կատարելու դիմաց տրված վարձատրությունը: Ըստ տնտեսությունների տարբեր են նաև վարձու աշխատողներին ըստ առանձին աշխատանքներին ընդգրկվածությունը: Ըստ մարզերի ինքնարժեքները հաշվարկելու համար հիմք ընդունելով վերը նշված հանգամանքները, կապված վարձու

աշխատողներին աշխատանքներում ներգրավելու առումով, ուսումնասիրվող մարզերում ընտրվել են խաղողի արտադրության աշխատանքների կազմակերպման առումով տվյալ մարզերին և համայնքներին բնորոշ տնտեսություններ: Արարատի և Արմավիրի մարզերում յուրաքանչյուրում 5 տնտեսություն, իսկ Վայոց ձորի մարզում 4 տնտեսություն, արդյունքում կատարված հաշվարկներով, համաձայն նույն մեթոդաբանության, ստացվել է հետևյալ պատկերը՝ Արարատի մարզում գործակիցը կազմել է 1,45 (83,8/57,5), Արմավիրի մարզում 1,40 (96,1/69,1) և Վայոց ձորի մարզում 1,36 (81,3/60,0): Վայոց ձորի մարզում նշված գործակցի համեմատաբար փոքր լինելը պայմանավորված է այն հանգամանքով, որ մարզի հարցված տնտեսությունները համեմատաբար փոքր են և տնտեսության անդամները ինքնուրույնաբար են կատարում խաղողի մշակության համար անհրաժեշտ աշխատանքների 2/3-ը, ինչով էլ պայմանավորված է՝ վարձու աշխատողների վարձատրության բացակայությունը, ցածր ամբողջական ինքնարժեք: Ինչ վերաբերվում է Արագածոտնի և Տավուշի մարզերին, ապա ինքնարժեքների հաշվարկ կատարելն ըստ էության նպատակահարմար չէ, քանզի խաղողի արտադրության նպատակով կատարված աշխատանքները գրեթե ամբողջությամբ, ինչպես արդեն նշվել էինք կատարվում է տնտեսության անդամների կողմից:

Եթե հաշվի առնենք, որ վերջին տարիներին խաղողի միջին բերքատվությունը Հայաստանի Հանրապետությունում կազմում է միջին հաշվով շուրջ 160 ց/հա, ապա հաշվի առնելով մեր հաշվարկները՝ 1 կգ միջին ինքնարժեքը 90 դրամ, իսկ իրացման միջին գինը՝ 163 դրամ (հարցման տվյալներով), կստանանք, որ 1 կգ խաղողի իրացումից ստացված շահույթը միջին հաշվով կկազմի 73 դրամ կամ 1 հա հաշվով (հաշվի առնելով խաղողի ապրանքայնության մակարդակը՝ 90%)՝ ավելի քան 1 մլն. դրամ: Անհրաժեշտ է նշել, որ այս ցուցանիշը հիմնական խաղողագործական շրջաններում՝ Արարատ, Արմավիր մոտ 1.5 անգամ գերազանցում է նշված միջին հանրապետական մակարդակը:

3. Խաղողի վերամշակում և գինեգործություն

3.1. Գինեգործության ոլորտի նախապատմություն

Հայաստանում գինեգործությունն ունի ավելի քան 6,000 տարվա պատմություն, և սա պարզապես լեգենդ չէ, այլ գիտականորեն ապացուցված փաստ: Հայաստանի՝ մասնավորապես Արենի գյուղի մոտ գտնվող քարանձավների տարածքում անցկացրած հնագիտական պեղումների ընթացքում հայտնաբերվել են գինեգործական սարքավորումների հնագույն նմուշներ, ինչպես նաև խաղողի սերմերի մնացորդներ: Պեղումներն իրականացվել էին հայ, ամերիկացի և իռլանդացի հնագետների կողմից: Ուսումնասիրության արդյունքները հրատարակվել էին այնպիսի հեղինակավոր լրատվամիջոցներում, ինչպիսիք են BBC-ն, National Geographic-ը և «The Journal of Archaeological Science»-ը:

Բացի այդ Երևանից ոչ հեռու գտնվող Կարմիր բլրի վրա անցկացրած պեղումների ընթացքում հնագետները հայտնաբերել են խաղողի սերմերի 12 տարբեր տեսակ, որոնք մինչև օրս օգտագործվում են գինու արտադրությունում: Հնագետները նաև գտել են գինու, ավելի քան 400 հին տակառ:

ԽՍՀՄ տարիներից գինեգործությունը հանդիսանում է Հայաստանի տնտեսության զարգացմանը նպաստող կարևորագույն հատվածներից մեկը և ներկայումս ներառված է ՀՀ տնտեսական ռազմավարությունում որպես գերակա ոլորտ:

Հայաստանում գինեգործության համարկան բարենպաստ բնակլիմայական պայմաններ, որոնք հնարավորություն են տալիս աճեցնել յուրօրինակ խաղողի տեսակներ, որոնք հանդիպում են միայն Կովկասյան տարածաշրջանում:

3.2. Գինու արտադրությունը կարգավորող օրենքը

«Գործունեության իրականացման ծանուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն,գինու արտադրությունը համարվում է ծանուցման ենթակա գործունեություն: Գինու արտադրության համար լիցենզիա հարկավոր չէ, լիազոր մարմինը համապատասխան ծանուցման հիման վրա պարզապես իրականացնում է հաշվառում:

«Գինու, խնձորի և պտղահատապտղային այլ գինիների արտադրություն» ծանուցման ենթակա գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Գործունեության իրականացման ծանուցման մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքների համաձայն: «Գինու, խնձորի և պտղահատապտղային այլ գինիների արտադրություն» գործունեության իրականացմամբ զբաղվելու իրավունք ունեն իրավաբանական և ֆիզիկական անձինք, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերը, ովքեր նշված գործունեությամբ զբաղվելու համար ՀՀ ֆինանսների նախարարություն են ներկայացնում ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 30-ի <<Ծանուցման ձևերը, ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման գրանցամատյանների վարման և հաշվառված անձանց տվյալների հրապարակման կարգը սահմանելու մասին>> թիվ 673-Ն որոշման թիվ 1 հավելվածով սահմանված ծանուցումը և կից փաստաթղթերը, որոնք կարող են ներկայացվել առձեռն, փոստով: Համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի՝ «Գինու, խնձորի և պտղահատապտղային այլ գինիների արտադրություն» գործունեության իրականացման համար տարեկան պետական տուրքը կազմում է 25,000 ՀՀ դրամ:

«Գինու, խնձորի և պտղահատապտղային այլ գինիների արտադրություն» ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար, անձը պարտավոր է վճարել օրենքով սահմանված պետական տուրքը և պետական տուրքի վճարման անդորրագիրը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը ծանուցման հետ միաժամանակ ներկայացնել լիազոր մարմին:

«Գինու, խնձորի և պտղահատապտղային այլ գինիների արտադրություն» ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառումը, ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի կասեցումն ու դադարեցումը, ինչպես նաև ծանուցման ենթակա գործունեության իրականացման հետ կապված բոլոր

հարաբերությունները կարգավորվում են «Գործունեության իրականացման ծանուցման մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով[4]:

3.3. Վերամշակման տեխնոլոգիաներ

Խաղողի գինին ստացվում է խաղողի քաղցուի մեջ պարունակվող շաքարի լրիվ կամ մասնակի սպիրտային խմորման արդյունքում: Սեղանի սպիտակ անապակ գինիները ստացվում են խաղողի սպիտակապտուղ սորտերից, քաղցուի մեջ պարունակվող շաքարի լիովին խմորման արդյունքում:

Խաղողի բերքահավաքը կատարվում է սեպտեմբերին խաղողի տեխնիկական հասունացման շրջանում՝ 19գ/մ^3–ից բարձր շաքարի պարունակության դեպքում:Խաղողի վերամշակումն իրականացնում են ավելի նուրբ մեխանիկական ռեժիմով, ինչը բացառում է խաղողի քաղցուի հարստացումը չանչի մեջ պարունակվող դաբաղային նյութերով՝օգտագործելով գրտնակային և թիակավոր ջարդիչ-չանչանջատիչներ: Չանչերն անջատելուց հետո փլուշը տեղափոխվում է մամլիչ: Բարձր որակի քաղցու ստանալու համար փլուշի մամլումը իրականացվում է զամբյուղային մամլիչով: Գինու ստացման համար օգտագործվում է ինքնահոս և 1-ին մամլման քաղցուները: Ստացված քաղցուն սուլֆիտացվում է 60մգ/դմ^3 SO2-ի հաշվով: Խմորումից առաջ քաղցուն պարզեցվում է:

Պարզեցումը տևում է 12-18 ժամ՝ 8-12^{0}C ջերմաստիճանի պայմաններում, որից հետո քաղցուն առանձնացվում է նստվածքից: Քաղցուի խմորման համար օգտագործվում են ակտիվ չոր խմորիչներ, որոնք նախատեսված են բարձրորակ սեղանի սպիտակ գինիների արտադրության համար: Խմորասնկային մերանը ավելացվել է քաղցուի ծավալի 3%-ի չափով:

Խմորման պրոցեսը տևում է 7-12 օր՝ 17- 21^{0}C ջերմաստիճանների պայմաններում:Բուռն խմորումն ավարտելուց 2 օր հետո կատարվում է առաջին փոխլցումը և երիտասարդ գինենյութը սուլֆիտացվում է 60 մգ/դմ^3 SO_2-ի հաշվով:

[4] ՀՀ Ֆինանսների Նախարարություն (17.03.2017). Ինչպե՞ս ներկայացնել գինու արտադրության ծանուցում՝ http://www.minfin.am/hy/content/ginu_artadrutyun/

30 օր հետո կատարվում է 2-րդ փոխլցումը, որից հետո գինենյութը սուլֆիտացվում է 100-200 մգ/դմ^3 SO_2-ի հաշվով: Սուլֆիտացիայի համար օգտագործվում է կալիումի մետաբիսուլֆիտ, որի բարձր քանակները գինուն կարող են հաղորդել ոչ հաճելի երանգներ:

Պահպանման ընթացքում տեղի է ունենում գինենյութի ինքնապարզեցում, որի արդյունքում ցրտաանկայուն կոլոիդները և գինեքարը անցնում են նստվածք: Կոլոիդները ադսորբում են գինենյութի կախույթային մասնիկները և միասին նստում են տարայի հատակին՝ պարզեցնելով գինին և բարենպաստ պայմաններ ստեղծելով ֆիլտրման և մշակման համար: Պահպանման տևողությունը կազմում է 6 ամիս[5]:

Վերևում նկարագրված է սեղանի սպիտակ անապակ գինու արտադրությունը: Գինու յուրաքանչյուր տեսակ ունի իր առանձնահատկությունները, հետևաբար կան որոշակի տարբերություններ տարբեր տեսակի գինիների արտադրական գործընթացներում. կարող է տարբերվել խաղողի բերքահավաքի հասունացման շրջանը, պարզեցման և խմորման տևողությունն ու ջերմաստիճանը, կիրառվող սարքավորումները և այլն:

Հարկ է նշել, որ վերջին տարիներին հիմնադրված գինու գործարաններն արտադրությունում օգտագործում են հիմնականում արդի սարքավորումներ, որոնք թույլ են տալիս ապահովել բոլոր գործընթացների ճիշտ իրականացումը և վերջնական արտադրանքի բարձր որակը: Տեխնոլոգիական վերազիննում իրականացրած գինեգործների հետ մեկտեղ շուկայում գործում են ԽՍՀՄ տարիներից ժառանգած սարքավորումներով աշխատող գինու գործարաններ: Այդ սարքավորումներից շատերն արդեն մաշված են և բացասաբար են ազդում գինու որակի և ընդհանուր արտադրողականության վրա:

Հարցված ընկերություններից միայն 33%-ն է վերջին 10 տարիների ընթացքում փոխել խաղողի վերամշակման տեխնոլոգիան: Սակայն հարկ է նշել, որ տեխնոլոգիական վերազիննում չիրականացրած ընկերությունների մի մասը հիմնադրվել է վերջին 10տարիների ընթացքում, և հնարավոր է, որ իրենց կողմից կիրառվող սարքավորումների օգտակար ծառայության ժամկետը դեռ չի լրացել: Օրինակ, սարքավորումների փոփոխություն չի իրականացրել «Արմենիա Վայն» գինու գործարանը, որը հիմնադրվել են 2008թ-ին: Սակայն «Արմենիա Վայն» ընկերությունը արտադրության մեջ կիրառում է արդի տեխնոլոգիաներ: Այսպես օրինակ շշալցման գործընթացն ընկերությունը կազմակերպում է

[5]Ագրոլրատու (12.11.2013). Գինիների պատրաստման տեխնոլոգիա՝ http://tavush.agro.am/index.php?id=1490&no_cache=1&tx_ttnews[tt_news]=9921

«Բերտոլասո» ընկերության նախագծած բարձրակարգ շշալցման հոսքագծով և սեփական լաբորատորիայի առկայության պարագայում՝ ունի ամբողջական գործիքակազմը, որը հնարավորություն է տալիս ամբողջ արտադրական գործընթացում վերահսկել որակը[6]:

«Արմենիա Վայն» ընկերության կողմից օգտագործվող սարքավորումներ

Աղբյուր՝ www.armeniawine.am

Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ սարքավորումների արդիականացում իրականացրած ընկերություններից շատերի մոտ նոր ձեռք բերած սարքավորումները դրական կերպով են ազդել գինու որակի և արտադրողականության վրա: Որոշ ընկերությունները սարքավորումների փոփոխության արդյունքումարձանագրել ենինքնարժեքի և գնի աճ: Սարքավորումների արդիականացման արդյունքում գրանցած ինքնարժեքի և գնի աճը կարող է պայմանավորված լինել մի քանի գործոններով: Նախ սարքավորումների շահագործման առաջին տարիների ընթացքում շատ են այդ սարքավորումների տեխնիկական սպասարկման ծախսերը: Երկրորդ պատճառն այն է, որ գինի արտադրողները չեն օգտագործում իրենց սարքավորումների ամբողջ հզորությունը: Եվ վերջին հիմնական գործոնն այն է, որնոր սարքավորումներ ձեռք բերելիս առաջին հինգ տարիների ընթացքում հաշվարկվում է դրանց ամորտիզացիան, որն ավելացնում է

[6]Life goes on in cellars՝ http://armeniawine.am/hy/about-us/winemaking/

արտադրանքի ինքնարժեքը: Շահագործումը սկսելուց հինգ տարի հետո սարքավորումը համարվում է մաշված, և վերջինիս համար մաշվածություն այլևս չի հաշվարկվում: Ստորև ներկայացված է սարքավորումների փոփոխության ազդեցությունը հարցված ընկերություններում:

Աղյուսակ 16. Սարքավորումների արդիականացման ազդեցությունը արտադրանքի վրա

Գործոն	Մասնաբաժին
Նվազել է ինքնարժեքը	33%
Նվազել է գինը	50%
Բարձրացել է որակը	83%
Բարձրացել է արտադրողականությունը	67%

Գինու արտադրությունը դիտարկելիս առանձնահատուկ ուշադրություն է պետք դարձնել որակի կառավարմանը: Որակի կառավարումը մեծ տեղ է զբաղեցնում հատկապես արտահանող ընկերություններում: Կարելի է ասել, որ վերջին տարիներին սննդի անվտանգության և որակի կառավարման բնագավառները դրական փոփոխությունների են ենթարկվել, քանի որ ավելի շատ ընկերություններ են սկսել գիտակցել վերջիններիս կարևորությունը:

Սննդի անվտանգության և որակի կառավարման բնագավառները գտնվում են նաև պետական և միջազգային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում: Այդ հաստատությունների կողմից լուրջ քայլեր են ձեռնարկվում սննդամթերքի որակի և ընկերությունների շրջանակներում սննդի անվտանգության վերաբերյալ իրազեկության բարձրացման ուղղությամբ: Հարցման արդյունքներիհամաձայնընկերությունների մեծ մասն ունի ներդրված ԵԱՏՄ որակի կառավարման միջազգային համակարգ: Հարկ է նշել, որ շատ քիչ ընկերություններ ունեն որակի այլ սերտիֆիկատներ, ինչպիսիք են ISO, FDA և HACCP: Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս, թե հարցված ընկերությունների որ մասն ունի ներդրված որակի կառավարման համակարգեր:

Աղյուսակ 17. Սննդի անվտանգության սերտիֆիկացումը վերամշակող ընկերություններում

Սերտիֆիկատ	Ընկերություններ, %

ԵԱՏՄ	81%
ISO	29%
FDA	10%
HACCP	10%
Այլ	5%

Ինչպես երևում է աղյուսակից որակի կառավարման ոլորտում դեռ բավականին շատ փոփոխություններ պետք է արվեն, որպեսզի սերտիֆիկացումն ավելի լայն տարածում գտնի արտադրողների մոտ: Համապատասխան միջոցառումներ պետք է իրականացվեն այդ ոլորտում ընկերությունների շրջանակներում առկա տեղեկացվածության խնդիրները վերացնելու նպատակով: Այս բարեփոխումները կնպաստեն արտադրանքի որակի բարձրացմանը, անվտանգության ապահովմանը և արտահանման ծավալների ավելացմանը, քանի որ շատ երկրներ ներմուծումը վերահսկելու նպատակով ընկերություններից պահանջում են որակի սերտիֆիկատներ:

3.4. Ընկերությունների դասակարգումն ըստ օգտագործվող սարքավորումների

Հիմնվելով փորձագետների հետ զրույցների վրա ըստ օգտագործվող սարքավորումների կարելի է տարանջատել գինի արտադրող ընկերությունների հետևյալ երեք խմբերը.

1. Հին սարքավորումներ և հին տեխնոլոգիաներ օգտագործող ընկերություններ, որոնք արտադրում են ցածրորակ և ցածր գնային կատեգորայի գինի: Այս ընկերությունների մեծ մասն անցել է կոնյակի արտադրությանը, քանի որ գինին շատ զգայուն է կիրառվող սարքավորումների նկատմամբ, և իրենց կողմից օգտագործվող սարքավորումները չեն կարողանում ապահովել գինու արտադրության և խմորման համար անհրաժեշտ ջերմային ռեժիմ և այլ պայմաններ:

2. Նոր սարքավորումներ և նոր տեխնոլոգիաներ օգտագործող ընկերություններ, որոնք այսօր կազմում են գինեգործական ընկերությունների մեծ մասը: Այս ընկերություններն արտադրում են միջին և բարձր գնային և որակական կատեգորիայի գինիներ:

3. Նոր սարքավորումներ և ավանդական տեխնոլոգիաներ կիրառող ընկերություններ: Նմանատիպ ընկերություններում գինու արտադրության և խմորման ժամանակ պահպանվում են հայկական գինեգործության ավանդույթները, օրինակ՝ գինին պահվում է կավե կարասներում: Նմանատիպ պայմաններում լավ գինու արտադրությունն ավելի շատ աշխատանք է պահանջում, այդ իսկ պատճառով նման տեխնոլոգիայով ստացված գինի համարվում է բարձրակարգ և թանկարժեք: Այս խմբի ներկայացուցիչն է «Զորահ» ընկերությունը, որը համադրում է ժամանակակից սարքավորումները և ավանդական գինեգործությունը:

3.5. Խաղողի պահպանման և առաքման ժամանակացույցը

Մյուս մրգերի հետ համեմատած խաղողն ունի բավականին երկար պահպանման ժամկետ. -1-0 ºC ջերմաստիճանի և 90-95% օդի խոնավության պայմաններում նրա պահպանման ժամկետը տևում է 4-6 ամիս: Սակայն հարկ է նշել, որ խաղողին բնորոշ է մի առանձնահատկություն. բերքահավաքի ժամանակ այն հնարավոր չէ հավաքել պայուսակի մեջ և այնուհետև դատարկել պահպանման համար նախատեսված այլ արկղի մեջ, քանի որ այդ պարագայում ավելանում է վնասված ողկույզների քանակը, և 22-28%-ով նվազում բերքի պահունակությունը:[7]

Առաքման ակտիվ շրջանները դիտարկելու համար կարելի է տարանջատել խաղողի սեղանի և տեխնիկական սորտերը: Խաղողի սեղանի սորտերի առավել ակտիվությունը դիտարվում է տոն օրերին: Այսպես օրինակ, խաղողի սպառումը հատկապես բարձր է դեկտեմբեր ամսվա վերջին՝ Ամանորյա տոներին ընդառաջ, փետրվարին, երբ նշում են Տրնդեզը, և Սուրբ Զատիկին: Խաղողի տեխնիկական սորտերի առաքումն ակտիվ է խաղողի բերքահավաքից հետո՝ սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին:

3.6. Հիմնական վերամշակող ընկերություններ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության տվյալների համաձայն Հայաստանում գործում է խաղող վերամշակող շուրջ 50 ձեռնարկություն, որոնցից 12-ը համեմատաբար խոշոր, որոնց հզորությունը գերազանցում է տարեկան 5,000 տոննան: («Երևանի կոնյակի գործարան», «Արտաշատ վինկոն» ՓԲԸ-ներ, «Երևանի Արարատ կոնյակի- գինու-օղու կոմբինատ» ԲԲԸ,

[7] Սնապյան, Գ. Գ. Պտուղների և խաղողի պահպանումը՝ https://library.anau.am/images/stories/grqer/Paren/snapyan-pahpanum.pdf

«Պռոշյանի կոնյակի գործարան», «Արարատի գինու գործարան», «Ավշարի գինու գործարան», «Շահումյան վին», «Գինու կոնյակի տուն «Շահնազարյան», «Ա.Կ.Զ.» «Սամկոն», «Արմենիա վայն գործարան», «Հայասի Գրուպ» ՍՊԸ-ներ): Ոլորտի ընդհանուր արտադրական հզորությունը կազմում է տարեկան շուրջ 265,000 տոննա: Արդյունաբերաարտադրական անձնակազմի միջին ցուցակային թիվը կազմում է շուրջ 2,820 հոգի[8]: Շատ քիչ ընկերություններ են, որոնք մասնագիտացած են միայն գինու արտադրության մեջ, նրանց մեծ մասը, գինուց բացի զբաղվում է նաև շամպայն գինու, կոնյակի և օղու արտադրությամբ: Սա կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ միատեսակ հումքից տարբեր ապրանքներ արտադրելու դեպքում կրճատվում է միավորի ծախսը:

Աղյուսակ 18. Հիմնական գինեգործական ընկերությունների ցանկ

Հ/հ	Անվանումը	Գործունեության ոլորտը	Արտադրության տեղակայման հասցեն
Ք. Երևան			
1	Պռոշյանի կոնյակի գործարան	Գինու, կոնյակի և օղու արտադրություն	Աշտարակի խճուղի, 2ա շենք
2	Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ	Գինու, կոնյակի, շամպայնի և օղու արտադրություն	Թբիլիսյան խճուղի, 20 շենք
3	«Աստաֆյան» գինու կոնյակի գործարան/ «Մանչո Գրուպ» ՍՊԸ	Գինու և կոնյակի արտադրություն	Արին-Բերդի 5-րդ նրբ., 10, Էրեբունի
4	«365 Վայնս»	Գինու և օղու արտադրություն	Աճառյան փող., 40ա շենք
5	«Երևանի Արարատկոնյակի-գինու-օղուկոմբինատ» ԲԲԸ	Գինու և կոնյակի արտադրություն	Ծովակալ Իսակովի պող., 9 շենք
6	«Հայլենդ Սելլարս» ՍՊԸ	Գինու արտադրություն	Մելիք-Ադամյան փող., 2/2 շենք

[8] ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն. Ագրովերամշակում, https://goo.gl/BSNhM1

Հ/հ	Անվանումը	Գործունեության ոլորտը	Արտադրության տեղակայման հասցեն
Արագածոտնի մարզ			
7	«Արմենիա Վայն» գործարան ՍՊԸ	Գինու արտադրություն	գ. Սասունիկ
8	Ոսկեվազի գինու գործարան	Գինու արտադրություն	գ. Ոսկեվազ
9	«Գոլդն Գրեյպ Արմաս»	Գինու արտադրություն	գ. Նոր Եդեսիա
10	«Վան Արդի» ՍՊԸ	Գինու արտադրություն	գ. Սասունիկ
Արարատի մարզ			
11	Ավշարի գինու գործարան	Գինու, կոնյակի և օղու արտադրություն	գ. Ավշար
12	«Սիսավանի գինու գործարան» ՍՊԸ	Գինու արտադրություն	գ. Սիսավան
13	«Մրգանուշի գինու, կոնյակի գործարան» ՍՊԸ	Գինու և կոնյակի արտադրություն	գ. Մրգանուշ
14	«Շատո-Առնո» ՍՊԸ	Գինու և կոնյակի արտադրություն	գ. Այնթափ
15	«Ագաթատ-Գոլդ» ՍՊԸ	Գինու, կոնյակի և օղու արտադրություն	գ. Նոր Կյուրին
16	«Վեդի Ալկո» ՓԲԸ	Գինու, կոնյակի և օղու արտադրություն	գ. Գինեվետ
17	Արարատի գինու գործարան ՍՊԸ	Գինու, կոնյակի և օղու արտադրություն	գ. Արարատ
18	«Վան-777»	Գինու և կոնյակի արտադրություն	գ. Տափերական
19	«Շահումյան-Վին» ՍՊԸ	Գինու արտադրություն	գ. Շահումյան

Հ/հ	Անվանումը	Գործունեության ոլորտը	Արտադրության տեղակայման հասցեն
20	«Տավինկո» գինու կոնյակի գործարան ՍՊԸ	Գինու և կոնյակի արտադրություն	գ. Տափերական
21	«Արտաշատի Վինկոն» գինու-կոնյակի գործարան	Գինու և կոնյակի արտադրություն	գ. Մխչյան
Կոտայքի մարզ			
22	«Շահնազարյան» գինու-կոնյակի տուն	Գինու, կոնյակի և օղու արտադրություն	Եղվարդ Երևանյան խճուղի, 7 շենք
23	«Գլանժ Ալկո» ՍՊԸ	Գինու և կոնյակի արտադրություն	գ. Արամուս
24	«Բյուրեղ Ալկո» ՍՊԸ	Գինու, կոնյակի և օղու արտադրություն	Բյուրեղավան
25	Եղվարդի գինու-կոնյակի գործարան ՓԲԸ	Գինու և կոնյակի արտադրություն	ք. Եղվարդ
Վայոց Ձորի մարզ			
26	Արենիի գինու գործարան ՓԲԸ	Գինու արտադրություն	գ. Արենի
27	«Մարան» ՍՊԸ	Գինու և օղու արտադրություն	ք. Եղեգնաձոր
28	«Վայք Գրուպ» ՓԲԸ	Գինու և օղու արտադրություն	Վայք Մոզ-1 թաղամաս
29	Գետնատուն գինու գործարան	Գինու և կոնյակի արտադրություն	Եղեգնաձոր Երևանյան խճուղի, 11 շենք
30	«Արենի Վայն» գինու գործարան	Գինու արտադրություն	գ. Արենի
31	«Մաթևոսյան Վայն»	Գինու արտադրություն	գ. Աղավնաձոր
32	«Հին Արենի»	Գինու արտադրություն	գ. Արենի

Հ/հ	Անվանումը	Գործունեության ոլորտը	Արտադրության տեղակայման հասցեն
33	«Տրինիտի Կանյոն Այգիներ»	Գինու արտադրություն	գ. Աղավնաձոր
Տավուշի մարզ			
34	Իջևանի գինու, կոնյակի գործարան ՓԲԸ	Գինու, կոնյակի և օղու արտադրություն, պահածոների արտադրություն	Իջևան Երևանյան փող., 9 շենք
Արմավիրի մարզ			
35	«ՄԱՊ» ՓԲԸ/ Արամե գինի	Գինու և կոնյակի արտադրություն, պահածոների արտադրություն	գ. Լենուղի
36	«Ալվան» ՍՊԸ	Գինու արտադրություն	ք. Արմավիր, Սահմանադրական 31ա
37	«Կարաս Վայնս»/ «Տիեռաս դե Արմենիա» ՓԲԸ	Գինու արտադրություն	Արևադաշտ համայնք

Գինեգործության և խաղողագործության վերլուծության նպատակով անցկացրած հարցմանը մասնակցել է վերը ներկայացված ընկերություններից 21-ը: Այդ ընկերությունների ամփոփ ցանկը ներկայացված է Հավելվածում 1-ում: Հարցված ընկերությունների մեծ մասը հիմնադրվել է ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, և միայն 14%-ն է, որ սկսել է գործել խորհրդային ժամանակաշրջանում: Հայկական ամենահին գինեգործական ընկերություններից են «Երևանի Շամպայն գինիների գործարան» ՍՊԸ-ն, որը հիմնադրվել է 1939թ-ին, «Մրգանուշի գինու-կոնյակի գործարան» ՍՊԸ-ն՝ հիմնադրված 1947թ-ին և «Վեդի Ալկո» ՓԲԸ-ն, որը սկսել է իր գործունեությունը 1956թ-ին:

Տարբեր են հարցված ընկերությունների կողմից խաղողի մթերման և գինու արտադրության ներկա հզորությունները: Ներկայումս գինեգործների շարքում գերակշռում են փոքր և միջին արտադրողները, մինչդեռ խոշոր ընկերությունները փոքրամասնություն են կազմում: Ընդհանուր առմամբ 2016թ-ին հարցված ընկերությունների կողմից մթերվել է 12,664 տոննա խաղող: Ծավալով ամենաշատ մթերումն իրականացրել է «Արմենիա Վայն» գործարանը, որի

կողմից մթերված խաղողի մասնաբաժինն ընդհանուրի մեջ կազմում է 17%: Հարցված ընկերությունների խաղողի մթերման և գինու արտադրության միջին հզորությունները հավասար են համապատասխանաբար տարեկան 3,963 և 2,038 տոննա: Ստորև բերված պատկերներում ներկայացված է հարցված ընկերությունների խմբավորումներն ըստ խաղողի մթերման և գինու արտադրության հզորությունների:

Նկար 12. Խաղողի մթերման ներկա հզորություն, տոննա



Նկար 13. Գինու արտադրության ներկա հզորություն, տոննա



Խաղողի մթերման ուղիների հետ կապված հարցերին պատասխանած 20 ընկերությունների 60%-ը խաղողը գնում է տարերայնորեն՝ գյուղացիներից և այլ առաջարկողներից: Հարցված ընկերություններից ոչ մեկ խաղողը չի գնում միջնորդների միջոցով, ինչի պատճառ կարող է հանդիսանալ միջնորդների կողմից առաջարկվող բարձր գինը: Անմիջապես գյուղացիներից խաղողը մթերում է հարցված ընկերությունների մոտ 40%-ը:

Աշխատակիցների քանակի տեսանկյունից նույնպես գերիշխում են փոքր և միջին գինեգործական ընկերությունները: Հարցվածներից միայն մի ընկերությունն ուներ 276 աշխատակից, ինչն ըստ սահմանման այդ ընկերությունը դարձնում է խոշոր: 2016թ-ին հարցված ընկերություններում աշխատողների ընդհանուր թիվը հավասար է եղել 927-ի, որից սեզոնային աշխատողներն էին 15%-ը: Սեզոնային աշխատողները հիմնականում աշխատում են բերքահավաքի ժամանակ, իսկ մշտական աշխատողները ներգրավված են վարչական, արտադրական և մատակարարման գործընթացներում:

3.7. Վայրերը

Հայաստանում գինեգործական հիմնական շրջաններն են Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Վայոց Ձորի մարզերը:

Հայաստանում խաղողի արտադրության 83%-ը գտնվում է Արարատի և Արմավիրի մարզերում[9], և զարմանալի չէ, որ տրանսպորտային ծախսերը կրճատելու նպատակով բազմաթիվ վերամշակողներ իրենց գործարանները տեղակայում են այդ երկու մարզերում:

Ստորև ներկայացված է աղյուսակ, որն ամփոփում է Հայաստանի Հանրապետության խաղողագինեգործության արտադրության մասնագիտացումն ու սորտերի տեղաբաշխումն ըստ խաղողագործական գոտիների.

Աղյուսակ 19. ՀՀ Խաղողագործական գոտիների մասնագիտացումը խաղողագինեգործության արտադրությունում[10]

Խաղողագործական գոտի	Խաղողագինեգործության արտադրության մասնագիտացում	Խաղողի սորտեր
Արարատյան հարթավայրում (Արարատի ու Արմավիրի մարզեր, որտեղ բարձրությունը հաշված ծովի մակերևույթից՝ 800–1100 մ, իսկ 10°C-ից բարձր ակտիվ ջերմաստիճանների գումարը՝ 3900–4300)	• Սեղանի կարմիր և սպիտակ անապակ • Կարմիր և սպիտակ բնական կիսաքաղցր գինիներ • Կոնյակի գինենյութի արտադրություն	Կանգուն, Կախեթ, Կարմրահյութ, Ռսկեհատ, Հաղթանակ, Մեղրաբույր, Ռքաձիթելի, Մուսկատհայկական, Մսխալի, Սափերավի, Տիգրանի, ԳառանԴմակ
Արարատյան հարթավայրի նախալեռնային գոտում (Թալին, Աշտարակ, Աբովյան, որտեղբարձրությունըհաշվածծովիմակերևույթից՝ 1100–1450 մ, իսկ 10°C-ից բարձրակտիվջերմաստիճանների գումարը՝ 3100–4000)	• Սեղանի կարմիր և սպիտակ անապակ • Շամպայն • Կարմիր և սպիտակ կիսաքաղցր գինիներ • Կոնյակի գինենյութի արտադրություն	Ռսկեհատ, Կանգուն, Հաղթանակ, ՍևԱրենի, ԳառանԴմակ
Հյուսիս-արևելյան գոտում (Բերդ, Իջևան, Նոյեմբերյան,	• Սեղանի սպիտակ թեթև անապակ	Լալվարի, Ալիգոտե, Բանանց, Կանգուն,

[9]ICare (2014). *Baseline Study of the Armenian Wine Sector*, Yerevan

[10]Vine and wine foundation of Armenia` http://vwfa.am/

Խաղողագործական գոտի	Խաղողագինեգործության արտադրության մասնագիտացում	Խաղողի սորտեր
որտեղբարձրությունըհաշվածծովիմակերևույթից՝ 450–1150 մ, իսկ 10°C-իցբարձրակտիվջերմաստիճանների գումարը՝ 2800–3900)	• Շամպայն գինիների և կոնյակի գինենյութի արտադրություն	Ռսկեհատ, Պինոսև, Ռքածիթելի, Շարդոնե, ԿաբերնեՍովինյոն
Դարալագյազի (Եղեգնաձոր, Վայք, որտեղբարձրությունըհաշվածծովիմակերևույթից՝ 1000–1300 մ, իսկ 10°C-իցբարձրակտիվջերմաստիճանների գումարը՝ 3900–4400)	• Սեղանի կարմիր և սպիտակ անապակ ու կիսաքաղցր գինիների արտադրություն	ՍևԱրենի, Ռսկեհատ, Տոզոտ, Կախեթ, Կարմրահյութ
Զանգեզուրի (Կապան, Մեղրի, որտեղբարձրությունըհաշվածծովիմակերևույթից՝ 600–1400 մ, իսկ 10°C-իցբարձրակտիվջերմաստիճանների գումարը՝ 2800–4800)	• Սեղանի անապակ, կիսաքաղցր, աղանդերային և լիքյորային գինիների արտադրություն	Արևիկ, ՍպիտակԱլդարա, Խնդոդնի, Կարմիրկոթենի, Հաղթանակ

Վայոց Ձորը կարևոր դեր է խաղում Հայաստանի գինեգործության ոլորտում: Հենց այդ մարզի Արենի գյուղում է անցկացվում ամենամյա գինու փառատոնը: Բացի այդ 2016թ-ին ամերիկյան CNN լրատվամիջոցը Հայաստանի Վայոց Ձոր մարզը ներառել է աշխարհի 15 լավագույն գինեգործության վայրերի ցանկում[11]:

Արարատյան հարթավայրը հանդիսանում է Հայաստանի գինեգործության խոշորագույն շրջանը. այստեղից են հիմնականում մթերում իրենց հումքը վերամշակող ընկերությունները: Խաղողի մթերման վայրերի տեսանկյունից հարկ է նշել, որ ընկերություններն իրենց հումքը ձեռք են բերում սովորաբար նույն մատակարարների մոտից, որպեսզի պահպանեն իրենց կողմից արտադրած գինու համը: Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է գինի արտադրող մի քանի խոշոր ընկերություն և այդ ընկերությունների կողմից խաղողի մթերման վայրերը:

Աղյուսակ 20. Ընկերություններիցանկնըստիրենցկողմիցխաղողիմթերմանվայրերի[12]

[11]Malathronas, J. (12.03.2016). World's best wine tours and trails, *CNN Travel*՝ http://edition.cnn.com/travel/article/wine-trail-destinations/index.html

[12]Համբարձումյան Ս. (27.09.2016). Երկու գործարան է կանխիկ վճարում խաղողի դիմաց, *Ժողովուրդ*՝ http://armlur.am/593748/

Ընկերություն	Մարզ
«Երևանի Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ» ԲԲԸ	- Արմավիրի մարզ - Արարատի մարզ
Արարատի գինու գործարան ՍՊԸ	- Արարատի մարզ
Ավշարի գինու գործարան	- Արարատի մարզ
«Վան-777»	- Արարատի մարզ՝ Տափերական գյուղ
Պռոշյանի կոնյակի գործարան	- Արմավիրի մարզ - Արարատի մարզ
«Արտաշատի Վինկոն» գինու-կոնյակի գործարան	- Արարատի մարզ
Իջևանի գինու, կոնյակի գործարան ՓԲԸ	- Արմավիրի մարզ
Եղվարդի գինու-կոնյակի գործարան ՓԲԸ	- Կոտայքի մարզ
«Արմենիա Վայն» գործարան ՍՊԸ	- Արագածոտնի մարզ

3.8. Պայմանագրերի կնքման պրակտիկա, առավելությունները և թերությունները

Գինեգործության ոլորտում չկա մեկ ընդհանուր գործելաոճ, որով առաջնորդվում են բոլոր ընկերությունները: Գինի արտադրող որոշ գործարաններ խաղողագործների հետ արդեն ունեն նախապես կնքված պայմանագրեր, մինչդեռ կան նաև գործարարներ, որոնք բանավոր պայմանավորվածություն ունեն գյուղացիների հետ:

Տարբերվում են նաև վերամշակող գործարանների մոտեցումները խաղողի դիմացվճարման նկատմամբ: Պայմանագրի առկայության դեպքում սովորաբար կազմվում է մարման ժամանակացույց և սահմանված ժամանակահատվածում մարվում է գումարը: Խաղողագործների հետ կանխիկ տարբերակով աշխատում է միայն Երևանի գինու և կոնյակի գործարանն ու «Արարատ» գինու, կոնյակի և օղու կոմբինատը[13]:

[13]Համբարձումյան Ս. (27.09.2016). Երկու գործարան է կանխիկ վճարում խաղողի դիմաց, *Ժողովուրդ՝* http://armlur.am/593748/

Հարցված ընկերություններից 14-ն են, որ 2016թ-ին խաղողի գնման պայմանագրեր են կնքել: Այդ ժամանակահատվածում ընդհանուր կքնված պայմանագրերի թիվը հավասար է 1,257-ի, իսկ այդ պայմանագրերով գնված խաղողի ծավալը և ընդհանուր արժեքը հավասար են եղել համապատասխանաբար 12,664 տոննա և 1,604,762 հազ դրամ: Հարցման արդյունքներից երևում է, որ գինու գործարանները միաժամանակ աշխատում են մեծ թվով մատակարարների հետ:Սա կարող է բացասաբար ազդել վերջնական արտադրանքի որակի վրա, քանի որ գոյություն ունեն բերքի որակի վերահսկման հետ կապված բարդություններ: Բացի այդ մեծ թվով մատակարարների հետ աշխատելը մեծացնում է ադմինիստրատիվ ծախսերը:

Պայմանագիր կքնած գինեգործական ընկերությունների միայն 14%-ն է, որ ֆերմերներին տրամադրում է պայմանագրով նախատեսված կանխավճար: Ընդ որում կանխավճարը տրամադրվում է միայն ֆինանսական տեսքով. պայմանագրով չի նախատեսվում բուժանյութերի, պարարտանյութերի, ագրոծառայությունների կամ այլ ապրանքների/ ծառայությունների տեսքով կանխավճարների մատուցում:

Գինեգործների հետ զրուցելու ընթացքում պարզ դարձավ, որ պայմանագրեր կնքելու պրակտիկան ներկայումս ավելի լայն տարածում է գտել ընկերությունների շրջանակներում: Գինեգործները կիրառում են պայմանագիրը որպես մատակարարների կողմից բերված հումքի որակը վերահսկելու միջոց, իսկ մատակարարների համար դա երաշխիք է, որ իրենց բերքը կմթերեն: Չնայած, որ պայմանագրերն առաջին հերթին պաշտպանում են վերամշակող ընկերությունների շահերը, ֆերմերները նույնպես կարող են օգուտ քաղել պայմանագրերից: Այսպես օրինակ որոշ գինեգործներ պայմանագրով նախատեսում են տեխնիկականխորհրդատվություն, ինչը թույլ է տալիս ֆերմերին բարելավել իրենց խաղողի որակը և այն ավելի մրցունակ դարձնել շուկայում:

3.9. Գինու արտադրության և խաղողագործության վիճակագրական վերլուծություն

Հայաստանում գինեգործությունն ունի մի քանի հազարամյակի պատմություն, իսկ 20-րդ դարից սկսած գինու արտադրությունը նշանակալի աճ է գրանցել: Ներկայումս գինեգործությունը հանդիսանում է Հայաստանի տնտեսության համար առանցքային ոլորտներից մեկը: Այդ իսկ պատճառով զարգացման ծրագրեր մշակելիս ՀՀ

կառավարությունը մեծ ուշադրություն է հատկացնում խաղողագործության և գինեգործության զարգացմանը:

Պայմանավորված ոլորտային ներդրումներով, արտահանման աճով, տեղական սպառողների մոտ ի օգուտ հայկական գինիների նախասիրությունների փոփոխությամբ՝ Հայաստանում գինու արտադրման ծավալները վերջինտարիներին զգալիորեն աճել են:

Ստորև ներկայացված գծապատկերն ամփոփում է վերջին 10 տարիների ընթացքում գինու արտադրական ծավալները:



Աղբյուր՝ ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն, www.minagro.am

Գինեգործության և խաղողագործության ոլորտներում ներդրումների շնորհիվ 2007-2011 թվականներին էապես աճեց Հայաստանումգինու արտադրությունը: Այդ տարիների ընթացքում խոշորներդրումներ են կատարվել այս ոլորտում ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ներդրողների կողմից, հատկապես՝ առաջադիմական տեխնոլոգիաների ձեռք բերման և արտադրական գործընթացների արդիականացման համար: Նույն ժամանակահատվածում ավելացել են նաև խաղողի մշակության տակ դրված հողատարածքները, քանի որ որոշ գինի արտադրողներ նախապատվություն են տալիս խաղողի սեփական այգիներ ունենալուն՝ խաղողի հատուկ սորտեր մշակելու համար[14]:

[14]ICare (2014). *Baseline Study of the Armenian Wine Sector*, Yerevan

Այսպես օրինակ, հարցված ընկերությունների 48%-ն ունի խաղողի սեփական այգիներ, և միայն մի ընկերությունն է, որ վարձակալում է խաղողի այգիներ: Այդ ընկերությունների խաղողի սեփական այգիների ընդհանուր տարածքը կազմում է 137.9 հա: Սակայն հարկ է նշել, որ արտադրության մեջ սեփական այգիներում աճեցրած խաղողի մասնաբաժինը բավականին փոքր է, միջին հաշվով՝ 6%:

Նկար 14-ից երևում է, որ 2014 և 2015թ-ին գինու արտադրական ծավալները նվազել են, որը պայմանավորված էր արտահանման ծավալների կրճատմամբ, որն իր հերթին, հայկական գինու ամենամեծ սպառման շուկայում՝ Ռուսաստանում առկա տնտեսական ճգնաժամի և ռուբլու արժեզրկման հետևանք է:

2016թ-ին հարցված ընկերությունների կողմից արտադրվել է 4,505.26 հազ. լ.գինի, որի արտադրության վրա, ընդհանուր առմամբ կատարվել են հետևյալ ծախսերը.

Աղյուսակ 21. Գինու ինքնարժեքի հաշվարկ

Գինենյութի արտադրություն	2016թ		1 լ գինու հաշվով
	Տոննա	Հազ դրամ	ՀՀ դրամ
Խաղողի գնում	7,529	1,195,621	265.38
Ուղղակի աշխատավարձ	-	386,299	85.74
Սոց. ապ. վճարներ	-	18,043	4
Տեղափոխման ծախսեր	-	24,527	5.44
Օժանդակ նյութեր	-	45,569	10.11
Գինու արտադրություն	Հատ	Հազ դրամ	1 միավորի արժեք
Շիշ	4,241,438	340,466	80.27
Խցան	4,845,340	213,330	44.03
Ջերմածածկոց	4,832,061	48,535	10.04
Պիտակ (1 շշի 2 պիտակը 1 հատ է հաշվում)	4,154,901	133,429	32.11
Ստվարաթղթե արկղ	421,846	77,732	184.27

Ակցիզ	3,191,204	162,668	50.97
Ուղղակի աշխատավարձ	-	783,583	173.93
Անուղղակի աշխատավարձ	-	421,377	93.53
Հարկեր և այլ վճարներ	-	729,306	161.88
Գինենյութի պահպանման ծախսեր	-	72,785	16.16
Տեղափոխման ծախսեր	-	60,646	13.46
Էլեկտրաէներգիա	-	60,978	13.53
Կոմունալ ծախսեր	-	110,901	24.62
Վերանորոգման ծախսեր (շենք, մեքենա, տակառ և այլն)	-	16,460	3.65
Ամորտիզացիա	-	142,691	31.67
Տարածքի վարձակալում	-	12,189	2.71
Արագամաշ առարկաներ	-	6,425	1.43
Գործուղման ծախսեր	-	65,782	14.6
Ներկայացուցչական ծախսեր	-	5,200	1.15
Գովազդային ծախսեր	-	19,418	4.31
Այլ ծախսեր	-	13,816	3.07
Ընդամենը ծախս	X	5,171,776	1,148

Այսպիսով, 1 լ գինու ինքնարժեքը հավասար է 1,148 դրամի[15]: Ներկայացված աղյուսակից պարզ է դառնում, որ գինու ինքնարժեքում ամենամեծ մասը՝ 23%-ը, կազմում է խաղողի գնման ծախսը: Բարձր է նաև ուղղակի աշխատավարձի տեսակարար կշիռը՝ հավասար լինելով 22.6%: Համեմատելով այս ցուցանիշներն Հայաստանից դուրս արտադրված գինիների հետ՝ կարող ենք նշել, որ արտասահմանյան գինիների ինքնարժեքում խաղողի և աշխատավարձի ծասերը նույն մասն են կազմում:

Վերջին ժամանակահատվածում խաղողի տնկարկների տարածքները մեծ փոփոխությունների չեն ենթարկվել. վերջիններիս թիվը բավականին կայուն է եղել: Ի

[15] Ինքարժեքում ներառված չէ ստվարաթղթե արկղի արժեքը:

տարբերություն տարածքների փոխվել է խաղողի համախառն արտադրությունը՝ 2015թ-ին հասնելով իր ամենաբարձր ցուցանիշին: Սակայն հարկ է նշել, որ նույն տարում եղել է գինու արտադրության զգալի կրճատում, ինչի հետևանքով եղել են խաղողի մթերման հետ կապված խնդիրներ: Վերամշակող ընկերությունների ֆինանսական խնդիրները թույլ չեն տվել ժամանակին կատարել մթերման դիմաց բոլոր անհրաժեշտ վճարումները, և մինչև այսօր որոշ ընկերություններ դեռ պետք է վճարումներ կատարեն մթերված խաղողի դիմաց:

3.10. Գինեգործության և խաղողագործության ոլորտների պետական աջակցության ուղիները

Խաղողագործությունը, գինեգործությունը և առհասարակ գյուղատնտեսական հումքի վերամշակումը հանդիսանում է ՀՀ գյուղատնտեսության զարգացման ռազմավարության[16] առանցքային ուղղություններից մեկը: Բարեփոխումներ իրականացնելու նպատակով կառավարությունն ընտրել է հետևյալ ուղիների, որոնք կնպաստեն ոլորտի զարգացմանն ու արդյունավետության բարձրացմանը.

1. Արտաքին առևտրի ռազմավարության հստակեցում, տրանսպորտային ուղիների շրջափակման վերացման հետևողական քայլերի ձեռնարկում
2. Բիզնես-տեղեկատվության տարածում, մարքեթինգային և գիտական հետազոտությունների ընդլայնում
3. Մասնագիտական կադրերի պատրաստում և առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման տեխնիկական աջակցություն
4. Հումք արտադրողների և վերամշակողների միջև կոոպերացիայի ձևավորմանն աջակցություն
5. Շուկային արագ հարմարվող փոքր արտադրությունների ստեղծմանն աջակցություն
6. Խաղողագործության և գինեգործության և մարքեթինգային բնագավառում կադրերի պատրաստում, վերապատրաստում, գիտական հետազոտությունների իրականացում և դրանց արդյունքների ներդրմանն աջակցություն
7. Վերամշակող արդյունաբերության արտադրության ուղղությամբ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խթանում
8. Վերամշակող կազմակերպությունների և տեխնիկական սորտերի խաղող արտադրողների միջև պայմանագրային փոխհարաբերությունների ձևավորման գործընթացին աջակցություն՝ այդ ուղղությամբ գործող մեխանիզմների մշակում,

[16] Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարություն

որոնք պետք է միտված լինեն վարկավորման մատչելիության բարձրացմանը, ռիսկերի նվազեցմանը և վճարային կարգապահության բարձրացմանը

9. Խաղողագործության և գինեգործության զարգացման գործում տեղական և արտաքին ներդրումների համար բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի ձևավորում, հումքի արտադրության և վերամշակող համատեղ կազմակերպությունների ստեղծման խթանում
10. Ներքին և արտաքին շուկաներում խաղողի վերամշակումից ստացված արտադրատեսակների մրցունակությունը բարձրացնելու նպատակով փոխշահավետ առևտրային կապերի ընդլայնում, ցուցահանդեսներին մասնակցության, տեղեկատվական միասնական դաշտի ձևավորման և տնտեսվարող սուբյեկտների համար տեղեկատվության մատչելիության ապահովում

Այս նախագծերի իրագործումը թույլ կտա նվազեցնել գինեգործության ոլորտի թույլ կողմերը ինչպես նաև սպառնալիքների ազդեցությունը այդ ոլորտի ներկայացուցիչների վրա: Սա կնպաստի ավելի ամուր ոլորտի ձևավորմանը և միջազգային շուկայում մրցակցության բարձրացմանը:

4. Տեղական վաճառք

4.1. Ներմուծում տեղական շուկա

Չնայած գինու տեղական արտադրության բարձր ծավալների, կա նաև այդ ապրանքատեսակի որոշակի քանակության ներմուծում տեղական շուկա: Վերջին երեք տարիներին ներմուծման ընդհանուր ծավալները բավականին կայուն են եղել և էական փոփոխությունների չեն ենթարկվել, սակայն ընդհանուր առմամբ գինու ներմուծումը նվազման միտում է ունեցել, ինչը կարելի է բացատրել ընդհանուր սպառման ծավալներում տեղական արտադրանքի մասնաբաժնի ավելացմամբ: Համաձայն Հայաստանի գինեգործների միության (հարցազրույցը վարվել է միության նախագահ Ավագ Հարությունյանի հետ), Հայաստանում վերջին տարիների ընթացքում մոտ 30%-ով աճել է հայկական գինու սպառումը:[17] Բացի այդ աճել է ավելի թանկարժեք և որակյալ գինու պահանջարկը: Իրացման կառուցվածքում տեղական գինու մասնաբաժինը վերջին տարիներին բավականին բարձր է և շարունակում է աճել: 2014թ-ին այս ցուցանիշը հավասար է եղել 94.1%, իսկ 2016թ-ին այն կազմել է 95.5%-ին:

Ստորև ներկայացված գծապատկերը ներկայացնում է ՀՀ գինու ներմուծման ծավալները 2012-2016 ժամանակահատվածում:



Աղբյուր՝Trade Map - Trade statistics for international business development, www.trademap.org

[17]«Հայաստանում հայկական գինու սպառումը ծավալի առումով մեծացել է մոտ մեկ երրորդով» (12.01.2017), *Արմենպրեսս*՝ https://goo.gl/TvLYgX

2016թ-ին գինի ներմուծող երկու խոշորագույն երկրներն էին Ֆրանսիան և Իտալիան: Հայաստանի Հանրապետություն գինի ներմուծող այլ երկրներն են Գերմանիան, Արգենտինան, Ռուսաստանի Դաշնությունը և այլն, սակայն այս երկրներից ներմուծվող գինու ծավալները էապես զիջում են Ֆրանսիայից և Իտալիայից ներմուծվող ծավալներին: 2013թ-ին մեծ էր Վրաստանից գինու ներմուծման մասնաբաժինը՝ 6.5%, սակայն 2014թ-ից սկսած այդ ծավալները զգալիորեն կրճատվեցին՝ 2016թ-ին կազմելով 2.5%:

Նկար 16. Հայաստան ներմուծվող գինու ծավալներն ըստ ներմուծող երկրների, 2012-2016, ԱՄՆ դոլար



Աղբյուր՝Trade Map - Trade statistics for international business development, www.trademap.org

Հարկ է նշել, որ մեր հարևան երկիր Վրաստանից գինու ներմուծումը մոտ 3 անգամ կրճատվել է 2012թ-ի համեմատ՝ 2016թ-ին կազմելով 27,000 ԱՄՆ դոլար:Պետք է նշել, որ վերջին տարիներին հայկական գինու հատկանիշները բարելավվում են և հայ սպառողը նախապատվությունը տալիս է տեղական գինուն: Ըստ գինեգործների միության, ներքին շուկայում էապես կրճատվում է վրացական գինիների մասնաբաժինը և ներկրվող 200,000 շիշ գինուց միայն 5,000-ն է վրացական:[18] Չնայած այս հանգամանքի՝ վրացական գինին բավականին մեծ հաջողությունների է հասնում օտարերկրյա շուկաներում:

Գինի ներմուծող հիմնական հայկական ընկերություններն են՝

- «Նոյան Տուն» ոգելից խմիչքների մասնագիտացված խանութների ցանցը

[18]«Հայաստանում հայկական գինու սպառումը ծավալի առումով մեծացել է մոտ մեկ երրորդով» (12.01.2017), *Արմենպրեսս*՝ https://goo.gl/KbwroG

- «Վինո&Վինո» գինիների և ալկոհոլային խմիչքների մասնագիտացված խանութ-սրահը
- «Անդակո» ՍՊԸ-ն
- «Պարմա» սուպերմարկետը
- «Դավիդոֆֆ» ծխախոտինպարագաներիիխանութսրահը
- «ԻնՎինո» գինուակումբ-վաճառատուն-բարը

4.2. Օգտագործվող արժույթը

Կախված հայկական գինի ներկրող երկրից տարբեր է օգտագործվող արժույթը, սակայն պայմանավորված այն հանգամանքով, որ գինիների մեծ մասը ներմուծվում է Եվրոպական երկրներից, ապա հիմնականում օգտագործվող արժույթը եվրոն է: Հայաստան ամենախոշոր ոչ եվրոպական գինի ներկրող երկիրը Արգենտինան է, և այս երկրից գինի ներկրելու դեպքում գործարքներն իրականացվում են պեսոյով: Օգտագործվող այլ արժույթներն են ռուսական ռուբլին, վրացական լարին և ԱՄՆ դոլարը:

Քանի որ վերջին տարիների ընթացքում ներմուծող երկրների մասնաբաժինն ընդհանուր կառուցվածքում բավականին կայուն է, չեն փոխվում նաև այս արժույթների մասնաբաժիններն ընդհանուր առևտրի կազմում:

4.3. Ապրանքատեսակների մասնաբաժինները և վաճառքի գները

Գինեգործության ոլորտի վերլուծության նպատակով անցկացրած հարցման շրջանակներում գինեգործական ընկերությունները գնահատել են տեղական շուկայում իրենց կողմից արտադրվող որոշ ապրանքանիշների մասնաբաժինը: Գնահատման արդյունքում բացահայտված ամենամեծ մասնաբաժին ունեցող ապրանքատեսակները բերված են Աղյուսակ 22-ում.

Աղյուսակ 22. Ներքին շուկայի ամենամեծ մասնաբաժինն ունեցող գինիներն ըստ հարցված գինու գործարանների

Ընկերություն	Ապրանքատեսակ	Գնահատված մասնաբաժին, %
Իջևանի գինու, կոնյակի գործարան ՓԲԸ	Իջևան կարմիր	40%
Իջևանի գինու, կոնյակի գործարան	Իջևան սպիտակ	35%
Պռոշյանի կոնյակի գործարան	Քիշմիշ կիսաքաղցր կարմիր	30%
Գետնատուն գինու գործարան	Գետնատուն	30%
Պռոշյանի կոնյակի գործարան	Արենի ռեզերվ	20%
«Արմենիա Վայն»	Արենի վայն կարմիր	18%

Գինեգործական ընկերությունների և ոլորտի փորձագետների հետ զրուցելու արդյունքում պարզ դարձավ, որ Հայաստանում վաճառվող տեղական արտադրության գինիները կարելի է բաժանել գնային խմբերի ըստ հետևյալ սանդղակի.

Աղյուսակ 23. Տեղական գինիների խմբավորումն ըստ գների

Կատեգորիա	Գնային միջակայք, ՀՀ դրամ	Ապրանքատեսակ
Ցածր գնային	մինչև 1,999	«Հոկտեմբերյան», «Կարաս», «Արարատ Կագոր», «Պռոշյան», «Սապերավի», «Վեդի Ալկո» և այլն
Միջին գնային	2,000 – 4,999	«Մաթևոսյան Գինի», «Վերնաշեն», «Գետնատան Արենի», «Իջևան», «Ոսկեվազ», «Վան Արդի» և այլն
Բարձր գնային	5,000 և ավելին	«Կուր», «Վեդի Ալկո Արենի», «Տակառ Ռեզերվ», «Կարաս Ռեզերվ», «Կատարո», «Կարասի Զորահ», «Ոկսեվազ Վանական» և այլն

Հիմնականում տեղական գինեգործները արտադրում են տարբեր գնային կատեգորիաների գինիներ: Այսպես՝ «Կարաս Վայնս» ընկերությունը մատչելի՝ մինչև 1,500 դրամ արժողությամբ գինիներին զուգահեռ արտադրում է նաև «Կարաս Ռեզերվ» գինին, որի արժեքն է 13,400 դրամ: Իսկ օրինակ Ոսկեվազի գինու գործարանը հիմնականում գործում է միջին գնային սեգմենտում և իր կողմից արտադրած գինու միջին արժեքը 3,200 դրամ է: Սակայն նույն գործարանի կողմից արտադրվող «Ոսկեվազ Վանական» տեսակը համարվում է թանկարժեք գինի և արժե 15,400 դրամ:

Ներմուծվող գինիների մեծամասնությունը գտնվում է միջին և բարձր գնային կատեգորիաներում, չնայած կան և բավականին էժան գինիներ, ինչպիսիք են «San Simon Castillo Jumilla Airen-Macabeo»-ն կամ «Cuvée Bio des Domaines Auriol Sauvignon», որոնց արժեքը չի գերազանցում 2,000 դրամը: Մատչելի գինիների շարքերում շատ են Վրաստանից ներմուծվող գինիները:Ներմուծվող ամենաթանկարժեք գինիներից է «Solaia Tuscany» իտալական գինին, որն արժե 136,000 դրամ: Հայաստանում վաճառվող ներմուծվող գինիները կարելի է բաժանել գնային խմբերի ըստ հետևյալ սանդղակի.

Աղյուսակ 24. Ներմուծված գինիների խմբավորումն ըստ գների

Կատեգորիա	Գնային միջակայք, ՀՀ դրամ	Ապրանքատեսակ
Ցածր գնային	մինչև 1,999	«San Simon Castillo Jumilla Airen-Macabeo», «Cuvée Bio des Domaines Auriol Sauvignon», «Marani Tbilisuri», «Marani Rkatsiteli» և այլն
Միջին գնային	2,000 – 4,999	«Botter Chardonnay», «Caleo Primitivo Salento», «Marani Saperavi», «Torres Sangre de Toro», «Santa Cristina Toscana», «Rioja Antano Reserva» և այլն
Բարձր գնային	5,000 և ավելին	«Ruffino Riserva Ducale», «Sichel Margaux», «Montagny», «La Reserve D'Angludet», «Grand Vin du Chateau Citran», «Solaia Tuscany»և այլն

InVino գինու վաճառատունը (հարցազրույցն իրականացվել է գործադիր տնօրեն Մարիամ Սաղաթելյանի հետ) նշել է, որ Հայաստանում վաճառվող ֆրանսիական «Կաբեռնե», «Շարդոնայ», «Սավինյոն», «Մեռլո» գինիները գրեթե նույն գինն ունեն, ինչ հայկական գինիները, սակայն որակով ավելի բարձր են տեղական ապրանքատեսակներից,այդ իսկ պատճառով սպառողները նախընտրում են խմել արտասահմանյան գինի[19]:

4.4. Փոխարինող ապրանքների առկայություն

Խաղողից պատրաստված գինուն փոխարինող ապրանք կարող են համարվել պտղահատապտղային գինիներըև այլ ալկոհոլային խմիչքները: Չնայած որոշ մասնագետներ պնդում են, որ գինի կարող է կոչվել միայն խաղողից պատրաստված խմիչքը, շուկայում առկա է նաև նռան, խնձորի, սերկեվիլի, ծիրանի և այլ մրգերի գինիներ:

[19]Սուրեն Ստեփանյան(05.08.2016). Ի՞նչ գինի խմենք երեկոյան՝ http://www.banks.am/am/news/interviews/12467

Տեղական շուկայում պտղահատապտղային գինիներից ամենատարածվածն է նռան գինին: Որոշ ընկերություններ խաղողի գինու արտադրությանը զուգահեռ զբաղվում են նաև այլ հումքից պատրաստվող գինու արտադրությամբ: «365 Վայնս» ընկերությունն առաջատար է այլընտրանքային գինիների առաջարկի տեսանկյունից: Այս ընկերությունը մասնագիտանում է պտղահատապտղային գինիների արտադրությունում և պատրաստում է նռան, մոշի, սերկեվիլի, ծիրանի, հոնի, ելակի և բալի գինիներ:

Հայաստանում տարածված է սեփական սպառման նպատակով տնային պայմաններում գինու արտադրությունը: Տանը պատրաստած գինին նույնպես փոխարինող ապրանք է հանդիսանում ընկերությունների կողմից արտադրած գինուն:

Գինուն փոխարինող ապրանքներ են համարվում նաև այլ ալկոհոլային խմիչքները և այսպես կոչված «երկար ըմպելիքները» (long drinks), որոնք 120 մլ-ից շատ ծավալ ունեցող և որոշակի քանակով ալկոհոլ պարունակող կոկտեյլներն են: Ալկոհոլային խմիչքների շարքին են դասվում վիսկին, կոնյակը, լիկյորը, գարեջուրը և օղին: Վերջին երկու տեսակներն ըստ ԱՎԾ-ի համարվում ամենից շատ սպառվող խմիչքները Հայաստանում (համապատասխանաբար 19.7 և 14.4 մլն լիտր 2016թ-ին): Ըստ սպառման քանակների գինին զբաղեցնում է 3րդ տեղը՝ զիջելով գարեջրին և օղուն: Սակայն ի տարբերություն խմիչքի այդ երկու տեսակների, որոնց սպառումը 2015թ-ի համեմատ կրճատվել է համապատասխանաբար 12.1% և 3.7%-ով, գինու սպառումը 7.7% աճել է[20]:

4.5. Վաճառքի ուղիներ

Ներկայումս գինի արտադրողների մեծ մասն ունի ներդրած առաքման սեփական համակարգ, որի միջոցով էլ իրականացվում է իրացումը տեղական շուկայում: Այսպես օրինակ հարցված ընկերությունների 67%-ն իր ամբողջ արտադրանքն իրացնում է առաքման սեփական համակարգի միջոցով, մինչդեռ միջնորդների միջոցով կամ անմիջապես վաճառողի կամ վերջնական սպառողի կողմից իրականացվող իրացման ցուցանիշը շատ ավելի ցածր է:

Հարկ է նշել, որ գինի արտադրող ընկերությունների մի մասը դիվերսիֆիկացնում է արտադրանքի իրացման ուղիները. հարցված ընկերությունների 38%-ը օգտվում է 1-ից ավելի

[20]Business for Business (22.05.2017). Ինչ և ինչքան են խմում հայերը. https://goo.gl/yBp4E6

իրացման ուղիներից: Սակայն նույնիսկ այս պարագայում գինու զգալի մասը առաքվում է սեփական համակարգի միջոցով: Ստորև ներկայացված աղյուսակում ամփոփված է ընկերությունների կողմից իրականացվող իրացումն ըստ ուղիների:

Աղյուսակ 25. Տեղական շուկայում գինու իրացման ուղիները

Իրացման ուղի	Ընկերություններ, %	Ընդհանուր արտադրանքի մասնաբաժին, %
Առաքման սեփական համակարգ	67%	65.8%
Միջնորդների միջոցով	24%	19%
Անմիջապես վաճառողներն են տանում	24%	9.5%
Անմիջապես սպառողներին	33%	5.6%
Այլ	5%	0.1%

4.6. Շուկա մուտք գործելու խոչընդոտներ

Գինեգործական ընկերությունների շուկա մուտք գործելու խոչընդոտները կարելի է դիտարկել «Փորթերի 5 ուժեր» գործիքի միջոցով: Այս գործիքը ներկայացնում է հնարավոր վտանգների հինգ հիմնական աղբյուր՝ նոր ընկերությունների մուտքը շուկա, մատակարարների մրցակցային ուժ, սպառողների մրցակցային ուժ, փոխարինող ապրանքների մրցակցային ուժ և շուկայի ընդհանուր մրցակցություն: Գինեգործական ոլորտում մատակարարները չունեն մրցակցային ուժ, իսկ մուտքը շուկա պայմանավորված է մեծ ներդրումների հետ: Հետևաբար գինի արտադրող ընկերությունների դեպքում խոչընդոտները գալիս են երեք հիմնական ուղղություններից՝ մրցակիցներից, փոխարինող ապրանքներից և սպառողներից:

Շուկա մուտք գործելու հիմնական խոչընդոտներից մեկը կապված է շուկայում առկա բարձր մրցակցության հետ: Հայաստանում գործում է խաղող վերամշակող շուրջ 50 ձեռնարկություն: Տեղական արտադրանքի հետ միասին Հայաստանում վաճառվում է նաև ներմուծվող գինի, ինչը նույնպես բարձրացնում է շուկայում մրցակցությունը: Բազմաթիվ գինեգործական ընկերություններ սահմանափակ ռեսուրսների պայմաններում չեն կարողանում մրցել մյուս

ընկերությունների հետ, ինչի հետևանքով կրճատվում է վերջիններիս մասնաբաժինը շուկայում:

Մեծ են նաև փոխարինող ապրանքներ արտադրող ընկերությունների կողմից առաջացող խոչընդոտները: Գարեջուր և օղի արտադրող ընկերությունների կողմից վաճառվող փոխարինող ապրանքները բավականին մեծ մրցակցային ուժ ունեն և շատ են սպառվում շուկայում:

Սպառողների հետ կապված հիմնական խոչընդոտը պայմանավորված է այն հանգամանքով, որտեղական շուկայում բազմաթիվ տնային տնտեսություններ սեփական սպառման համար ինքնուրույն են պատրաստում գինի: Վերջնահաշվում ստացվում է, որ տնային տնտեսությունը, որը պոտենցիալ սպառող է գինեգործի համար, դառնում է նրա անուղղակի մրցակիցը:

5. Օտարերկրյա շուկաներ

5.1. Արտահանման ծավալները

Տեղական շուկայի սահմափակ լինելու պատճառով հայկական գինեգործների համար էական նշանակություն ունի արտահանումը դեպի այլ շուկաներ: Չնայած ընկերությունների կողմից քայլեր են ձեռնարկվում նոր գործընկերներ գտնելու և արտահանման ուղղությունները դիվերսիֆիկացնելու նպատակով, հայկական գինու արտահանման հիմնական շուկան շարունակում է մնալ Ռուսաստանի Դաշնությունը: Հայաստանն իր գինիների մոտ 72%-ն արտահանում է Ռուսաստան: 2016թ-ին ՌԴ արտահանված գինու գումարային արժեքը կազմել է 4,493 հազ ԱՄՆ դոլար:Հայկական գինու արտահանման այլ ուղղություններն են ԱՄՆ-ն, ԵՄ երկրները և Վրաստանը, սակայն այս երկներ արտահանվող ծավալներն էապես զիջում են Ռուսաստանին: Վերջին տարիներին արտահանման աշխարհագրությունը բավականին կայուն է եղել և էական կառուցվածքային փոփոխությունների չի ենթարկվել:

Ստորև բերված պատկերը ներկայացնում է վերջին 5 տարիների ընթացքում Հայաստանից գինու արտահանումը՝ ըստ արտահանման ուղղությունների: Պատկերից երևում է, որ վերջին ժամանակահատվածում գինու արտահանումը բավականին անկայուն է եղել. 2014թ-ի արտահանման բարձր ծավալներին հաջորդեցռուբլու արժեզրկմամբ պայմանավորված մոտ 50%-ով կրճատումը, սակայն 2016թ-ին արտահանման ծավալները վերականգնվեցին:



Աղբյուր՝Trade Map - Trade statistics for international business development, www.trademap.org

ՀՀ ԱՎԾ-ի կողմից հրապարակած տվյալների համաձայն 2014-2016 թվականներին Հայաստանից արտահանվել է համապատասխանաբար 2120.7, 1451.6 և 1829.9 հազ.լ.գինի[21]:

Հայաստանից Ռուսաստանի Դաշնություն արտահանվող մեկ շիշ գինու մաքսային արժեքը 2013թ-ին կազմել է 3.9 դոլար, մինչդեռ դեպի ԱՄՆ արտահանման դեպքում այդ ցուցանիշը հավասար է եղել 6.9 դոլար: Վրաստան և Լիտվա արտահանվում է համեմատաբար ավելի էժան գինի: Այդ երկրներ արտահանվող գինու մաքսային արժեքը համապատասխանաբար կազմում է 2.6 և 2.4 ԱՄՆ դոլար: Հայկական ամենաթանկ գինիներն արտահանվում են Իտալիա. մաքսային արժեքը՝ 15.1 ԱՄՆ դոլար[22]:

Գինու արտահանման դինամիկան ներկայացվում է ստորև բերված Նկար -ում:

[21]ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն՝https://goo.gl/skrqdF

[22]ՍամվելԱվագյան (01.04.2014).
Հայկականգինինփորձումէհաստատվելմիջազգայինշուկայում՝https://goo.gl/arURKo



Աղբյուր՝Trade Map - Trade statistics for international business development, www.trademap.org

Քանի որ արտահանված գինու զգալի մասն ուղևորվում է ՌԴ, ՀՀ գինու արտահանման ծավալների փոփոխության վրա էապես ազդում է Ռուսաստանի տնտեսական իրավիճակը, ինչպես նաև այլ երկրների հետ վարվող միջազգային քաղաքականությունը: Այսպես օրինակ 2006թ-ին ՌԴ-ն արգելեց Վրաստանից և որոշ չափով Մոլդովայից գինու ներմուծումը, ինչի արդյունքում 2007թ-ին մոտ երեք անգամ աճեց Հայաստանի արտահանումը դեպի Ռուսաստան[23]:

2012թ-ինգրանցվել է Հայաստանից ավելի քան 100,000 ԱՄՆ դոլարի գինու արտահանման աճ: Այդ ցուցանիշը աճել է նաև հետագա տարիներին մինչև 2014թ, քանի որ Հայաստանում ավելանում էր արտահանման լիցենզիա ունեցող ընկերությունների թիվը[24]: Հարկ է նշել, որ գինու արտահանումը դեպի Ռուսաստան կարող էր ավելի արագ տեմպերով աճեր, եթե վերջինս չթույլատրեր Վրաստանից գինու մուտքը դեպի ՌԴ: Եվ ինչպես արդեն նշվեց, 2015թ-ի արտահանման ծավալների կտրուկ նվազումը պայմանավորված է եղել Ռուսաստանում տնտեսակ իրավիճակի վատթարացման հետ:

[23]Արմինե Ավետյան (28.01.2007). Ինչո՞ւաշխարհըչիճանաչումհայկականգինին՝ https://archive.168.am/articles/8997
[24]Armef.news (14.03.2013). Հայկականգինուարտահանմանաճ՝ http://armef.com/hy/news/verlutsutyun/article_1363261333/

5.2. Արտահանման հնարավորությունները և հայկական գինու դիրքը միջազգային շուկայում

Ըստ գինեգործների միության, կատարյալ պայմանների դեպքում, երբ խաղողի արտադրությունը կայուն է, Հայաստանն ունի 10 մլն շիշ գինի արտահանելու հզորություն: Այդ միտումը պահպանելու դեպքում Հայաստանը կարող է Ռուսաստան արտահանված գինու ծավալները կրկնապատկել՝ 2 մլն շշից հասցնելով 4-5 մլն[25]:

Հայաստանի բաժինը գինու համաշխարհային շուկայում ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

Աղյուսակ 26. Հայաստանի բաժինը գինու համաշխարհային շուկայում

	2005	2010	2015
Խաղողի գինի	0.003%	0.01%	0.012%
Մրգային գինի	0.072%	0.159%	0.209%

Աղբյուր՝ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ, www.vwfa.am

Չնայած 2010 թ-ին արձանագրած աճի՝ վերջին տարիներին հայկական գինու մասնաբաժինը համաշխարհային շուկայում էական փոփոխությունների չի ենթարկվել: Հատկանշական է այն փաստը, որ համեմատած խաղողի գինիների մրգային գինիների մասնաբաժինն ավելի մեծ է, ինչը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ մրգային գինիների առաջարկն ամբողջ աշխարհում ավելի փոքր է, և հետևաբար ավելի քիչ է մ րցակցությունը:

Հայկական գինու տեղը միջազգային շուկայում դիտարկելիս, ըստ գինեգործների միության, սպառման տեսանկյունից Հայաստանը զբաղեցնում է 64րդ տեղը: Հայկական գինին անմրցունակ է 10 եվրո և ավելի արժեք ունեցող գինիների մեջ, իսկ 1-2 եվրո գինիների մեջ՝ շատ որակով: Հայկական գինիները բավականին մրցունակ են 3-4 եվրոյի ցուցակում, իսկ 5-10-ում՝ կախված է արտադրողից[26]:

Հարկ է նշել, որ հայկական գինին բարձր գնահատման է արժանացել Եվրոպայում. 2017թ. փետրվարին Գերմանիայի Նոյշտադ քաղաքում կազմակերպած MUNDUS VINI 20th Grand

[25]Ալինա Հովհաննիսյան (18.08.2017). Փորձագետ. Հայկական գինու արտահանման ներուժը տարեկան 10 մլն շիշ է՝ http://www.finport.am/full_news.php?id=31032&lang=1

[26]ԵՐԿԻՐ (11.10.2011). Հայաստանում գինու որակը բարելավվել՝ http://www.yerkir.am/am/news/view/13782.html

International Wine Awards մրցանակաբաշխությանը հայկական գինեգործները ստացել են 10 ոսկե և 13 արծաթե մեդալ: Մրցանակաբաշխությանընեներկայացված է եղել 6,000 տեսակի գինի 44 երկրներից: Համեմատության համար այս մրցանակաբաշխության ժամանակ Վրաստանը ստացել է 4 ոսկե և 7 արծաթե մեդալ, Մոլդավան՝ 8 ոկսե և 12 արծաթե մեդալ և Ռումինիան՝ 6 ոսկե և 5 արծաթե մեդալ[27]: Չնայած այս բարձր ցուցանիշի՝ Հայաստանը դեռ զիջում է միջազգային հարթակներում մեծ ճանաչում գտած գինի արտադրող երկրներին՝ Ավստրալիային (70 մեդալ), Հարավային Աֆրկային (61 մեդալ), Չիլիին (47 մեդալ) և Արգենտինային (45 մեդալ):

Հայկական գինին միջազգային ցուցահանդեսներում արժանացել է նաև այլ մրցանակների: Արմենիա Մուսկատ 2012-ըՖրանսիայում անցկացվող «Մուսկատ դյու Մոնդ» («Muscats du Monde») գինու միջազգային մրցույթում 2013 թ-ին գլխավորել է Մուսկատ խաղողի տեսակից պատրաստված գինիների լավագույն տասնյակը: Մրցույթին մասնակցել է աշխարհի 24 երկիր, որոնցից 7-ն է ընդգրկվել 2013 թվականի լավագույն տասնյակում[28]: Իսկ 2015 թ-ին կրկին Ֆրանսիայումտեղի ունեցած «Մոնդիալ դյու Ղոզե»(«Le Mondial duRosé») վարդագույն գինիների միջազգային մրցույթում Արմենիա վարդագույն անապակ 2014 գինին արժանացել է ոսկե մեդալի[29]:

Չնայած այս բոլոր մրցանակներին, կա հայկական գինի աշխարհին ավելի ճանաչելի դարձնելու խնդիր: Հայաստանը դեռ երկար ճանապարհ պետք է անցնի, որպեսզի հայկական գինին ավելի հայտնի դարձնի ամբողջ աշխարհին և կարողանա մրցել ոչ միայն վերջերս լայն տարածում գտած ու գինեգործության ոլորտում արագ զարգացող երկրների (Չիլի, Հարավային Աֆրիկա, Ավստրալիա և այլն), այլ նաև ավանդական արտադրողների հետ (Ֆրանսիա, Իտալիա, Իսպանիա):

5.3. Հայկական գինու վաճառքի գներն ու շահութաբերությունն այլ երկրներում

Հաշվի առնելով հայկական գինու արտահանման հիմնական ուղղությունները՝ դիտարկենք հայկական գինու վաճառքի գները Ռուսաստանի Դաշնությունում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում և Ֆրանսիայում: Այս նպատակով ընտրվել են էժան, միջին և բարձր գնային

---

[27]WhyArmenia (2017, March 09). Armenian Wines Delight the World: 10 Gold Medals from International Wine Awards` https://goo.gl/jrddcF

[28]Արմենիա Մուսկատ 2012, աշխարհի լավագույն մուսկատ գինի 2013. (11.03.2016)` http://armeniawine.am/hy/armenia-muscat-2012-the-best-muscat-of-the-world/

[29]Արմենիա վարդագույն անապակ գինին (2014) արժանացել է ոսկե մեդալի «Mondial du Rosé 2015» մրցույթում. (11.03.2016)` http://armeniawine.am/hy/armenia-dry-rose-2014-awarded-gold-medal-at-mondial-du-rose-2015/

կատեգորիայի գինիներ: Աղյուսակում ներկայացված են այդ երկրների օնլայն խանութների վաճառքի միջինացված գները:

Գինի	ՌԴ	ԱՄՆ	Ֆրանսիա	Հայաստան
	Մանրածախ գին, ՀՀ դրամ			
«Արմենիա», Սպիտակ անապակ	4,680	3,893	6,015	1,750
«Տիեռաս դե Արմենիա», Կարաս կարմիր չոր	8,834	12.158	9,043	4,350
«Կարասի Զորահ», կարմիր անապակ	24,620	22,661	24,450	20,900

Ինչպես երևում է աղյուսակից նույն տեսակի գինիների մանրածախ գինը տարբերվում է ըստ այդ գինին ներմուծող երկրի, ինչը պայմանավորված է դեպի այդ երկրներ արտահանման ծախսերի անհամասեռությամբ: Սակայն հարկ է նշել, որ այս աղյուսակը չի ներկայացնում իրական պատկերը, քանի որ ի տարբերություն Հայաստանի, որտեղ վաճառքի գները հիմնականում նույնն են, հայկական գինի ներմուծող նույն երկրում տարբեր վերավաճառողներ կարող են իրարից էապես տարբեր մարժաներ սահմանել:

Շահութաբերության տեսանկյունից պետք է նշել, որ հայկական գինի արտադրողների համար ավելի շահավետ է գինու արտահանումը ԵԱՏՄ երկրներ, որտեղ զարգացած չէ գինեգործությունը և շատ չեն տեղական փոխարինող գինիները: Այս երկրներում բարձր է մարժան, և, հետևաբար, բարձր է նաև վաճառքից ստացվող եկամուտը: Բացի այդ ԵԱՏՄ արտահանումը պայմանավորված է ավելի ցածր ծախսերի հետ, քանի որ չկան մաքսային վճարներ և ավելի քիչ են տրանսպորտային ծախսերը:

Ի տարբերություն ԵԱՏՄ երկրների, Եվրոպա և ԱՄՆ արտահանումն ավելի պակաս շահավետ է, քանի որ այդ երկրներում շատ են տեղական արտադրողները, որոնք սպառողներին առաջարկում են մատչելի գինի: Հետևաբար, մրցունակ լինելու համար հայկական գինեգործական ընկերությունները ստիպված են լինում ավելի փոքր մարժա սահմանել:

5.4. Ռուսական, եվրոպական և ամերիկյան շուկաների հակիրճ վերլուծություն

Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Գինու համաշխարհային շուկայում արտադրական ծավալների տեսանկյունից առաջատար երկրներն են Իտալիան, Ֆրանսիան և Իսպանիան: ԱՄՆ-ն զբաղեցնում է 4րդ տեղը՝ 2016թ-ին արտադրելով 23.9 մլրդ լ գինի: Երկրի գինու արտադրությունը հիմնականում կենտրոնացած է Կալիֆորնիա նահանգում, որտեղ 2016թ-ին արտադրվել է Ամերիկայի գինու ամբողջ արտադրության մոտ 84%-ը: Ըստ Wines&Vines-ի 2017թ-ի դրությամբԱՄՆ-ում գործում է 9,091 գինի արտադրող, որից 4,202-ի գտնվում է Կալիֆորնիայում[30]: Գինի արտադրող առաջատար ընկերությունն է E&J Gallo Winery-ին, ում շուկայի մասնաբաժինը 2016թ-ին կազմել է 24%[31]: Ստորև բերված գծապատկերը ներկայացնում է ԱՄՆ-ում և Կալիֆորնիայում գինու արտադրության ծավալները 2006-2016 թվականներին:

Նկար 19. Գինու արտադրությունը Ամերիկայում և Կալիֆորնիայում, 2006-2016թ, մլն. լ



Աղբյուր՝Statista, www.statista.com

Անցած տարիների ընթացքում Ամերիկայում գինու վաճառքը կազմել են ընդհանուր ալկոհոլի մանրածախ վաճառքի 15-18%: Ըստ 2015թ-ի վաճառքի ծավալների կարելի է ասել, որ

[30]Statista. U.S. Wine Market/Industry and Consumption - Statistics & Facts: https://www.statista.com/topics/1541/wine-market/

[31]Euromonitor International (06.2017). Wine in the US: http://www.euromonitor.com/wine-in-the-us/report

ամերիկացի սպառողները նախընտրում են Շարդոնե, Կաբերնե Սովինյոն և Ռեդ Բլենդս գինու տեսակները:

Վերջին տարիներին Ամերիկայում գինու սպառման ծավալները կայուն աճ են գրանցում: Մեկ անձի հաշվով գինու միջին սպառումն Ամերիկայում 2015թ-ին կազմել է 7.6 լ՝ 2005թ-ի համեմատ գրանցելով 20% աճ: Հարկ է նշել նաև, որ սպառման ծավալները վերջին տարիներին կայուն աճ են արձանագրում: Ամերիկացիների նախասիրությունների մասին կարելի է ասել, որ իրենք նախընտրում են գինի խմել տանը. վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ իրենք տանը գինի խմելու վրա ծախսում են 129.01 ԱՄՆ դոլար, իսկ ռեստորաններում՝ 38.82 ԱՄՆ դոլար[32]:

Արտադրական և սպառման ծավալներին զուգահեռ աճում է նաև գինու ներմուծումը դեպի ԱՄՆ: Ամերիկա երկու խոշոր գինի ներմուծող երկրներն են Իտալիան և Ֆրանսիան, որոնց մասնաբաժինը ընդհանուր ներմուծման ծավալներում 2016թ-ին կազմել է համապատասխանաբար 32.3% և 28.7%: ԱՄՆ գինի ներմուծող այլ երկրներն են Ավստրալիան, Նոր Զելանդիան, Իսպանիան, որոնց ներմուծման ծավալները ներկայացված են ստորև բերված գծապատկերում:



Աղբյուր՝Trade Map - Trade statistics for international business development, www.trademap.org

[32]Statista. U.S. Wine Market/Industry and Consumption - Statistics & Facts: *https://www.statista.com/topics/1541/wine-market/*

ԱՄՆ գինու ներմուծումը զգալիորեն գերազանցում է գինու արտահանման ծավալները: ԱՄՆ-ն գինի արտահանում է հետևյալ հիմնական ուղղություններով՝ Կանադա, Մեծ Բրիտանիա, Հոնգ Կոնգ, Գերմանիա, Ճապոնիա և այլն:



Աղբյուր՝Trade Map - Trade statistics for international business development, www.trademap.org

Ռուսաստանի Դաշնություն

Հայկական գինու և առհասարակ ալկոհոլի արտահանման ճնշող մեծամասնությունը բաժին է ընկնում Ռուսաստանին: Սակայն վերջին ժամանակներում Հայաստանի գործընկեր Ռուսաստանի բարդ տնտեսական իրավիճակը բացասաբար է անդրադառնում նաև Հայաստանի տնտեսության վրա՝ կրճատելով երկրից արտահանման ծավալները:

Ռուսաստանի ծանր տնտեսական իրավիճակը պայմանավորված է նավթի գների իջեցմամբ, ռուբլու արժեզրկմամբ և ԵՄ ու ԱՄՆ կողմից կիրառվող սանկցիաներով: Այս բոլոր գործոններնիրենց ազդեցությունն են թողել ՌԴ-ի էներգետիկայի, արդյունաբերության և այլ ոլորտների վրա: ՌԴ վիճակագրական ծառայությունների հրապարակած տվյալների

համաձայն 2014թ-ից երկրում զգալիորեն կրճատվել է ՀՆԱ-ի իրական արժեքը: Ստորև ներկայացված աղյուսակը ամփոփում է 2012-2016 թվականներին իրական ՀՆԱ-ն, վերջինիս տարբերությունը նախորդ ժամանակահատվածի համեմատ, ինչպես նաև այդ երկու ցուցանիշների մոտակա 5 տարվա կանխատեսումները.

Աղյուսակ 27. ՌԴ ՀՆԱ-ի իրական արժեքը և վերջինիս տարբերությունը նախորդ ժամանակահատվածի համեմատ, 2012-2021, տրլն ռուբլի

Ցուցանիշ	2012	2013	2014	2015	2016	2017*	2018*	2019*	2020*	2021*
Իրական ՀՆԱ	42,9	43,4	43,7	41,7	41,1	41,1	41,2	41,3	41,5	41,8
% նախորդ տարվա համեմատ	3,4	1,3	0,6	-4,6	-1,5	0,0	0,2	0,4	0,5	0,7

*Կանխատեսումներ

Աղբյուր՝ ՌԴ տնտեսական զարգացման նախարարություն, Պետական վիճակագրական ծառայություն, Արժույթի միջազգային հիմնադրամ, BusinesStat

Չնայած, որ ըստ կանխատեսումների ՀՆԱ-ն աճ է ապրելու, սակայն Ռուսաստանի տնտեսությանը ակնառու բարելավումներ դեռ չեն սպասում:

Ինչպես նշեցինք, տնտեսական անկումը բացասաբար է ազդել երկրի տարբեր ոլորտների վրա, բացառություն չէ նաև գինեգործության ոլորտը, որտեղ նկատելի են արտադրական ծավալների կրճատումներ: Այսպես օրինակ 2012-2014 թվականներին Ռուսաստանում 12.5%-ով նվազել է գինու արտադրությունը՝ իջնելով տարեկան 850 մլն.լ-ից մինչև 743,7 մլն.լ: Այնուամենայնիվ, 2015թ-ին երկրում նկատվել է գինու արտադրական ծավալների աճ՝ պայմանավորված Ռուսաստանի և Ղրիմի, մասնավորապես Սեվաստոպոլի, վերամիավորմամբ, որտեղ գինեգործությունը համարվում է պրոֆիլային ոլորտներից մեկը: Նույն տարում ավելացել է արտադրությունը նաև Ռուսաստանի այլ տարածաշրջաններում: Սակայն 2016թ-ին արտադրությունը կրկին կրճատվել է 8.6%-ով:

2013-2015 թվականներին Ռուսաստանում 43.7%-ով կրճատվել է գինու ներմուծումը՝ 1,2 մլրդ. ԱՄՆ դոլարից հասնելով 691,4 մլն. ԱՄՆ դոլարի: Ներմուծման կրճատման հիմնական պատճառներն էին ռուբլու արժեզրկումը և բնակչության իրական եկամուտների նվազումը:

2016թ-ին գինու ներմուծման ծավալներն աճեցին 5.2%-ով[33]: Ներմուծումն իրականացվում է հիմնականում Իտալիայից, Ֆրանսիայից, Իսպանիայից, Վրաստանից և մի շարք այլ երկրներից: Ստորև բերված գծապատկերում ներկայացված է վերջին 5 տարիների ընթացքում դեպի Ռուսաստան գինու ներմուծումների դինամիկան՝ ըստ ներմուծող երկրի:



Աղբյուր՝Trade Map - Trade statistics for international business development, www.trademap.org

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է Ռուսաստանում գինու ընդհանուր առաջարկը և վերջինիս վերաբերյալ կանխատեսումները:

[33]Trade Map - Trade statistics for international business development, *www.trademap.org*

Աղյուսակ 28. Ռուսաստանում գինու առաջարկը և կանխատեսումները:

Ցուցանիշ	2012	2013	2014	2015	2016	2017*	2018*	2019*	2020*	2021*
Առաջարկ /մլն լ/	1 322,09	1 295,13	1 241,37	1 200,81	1 147,02	1 181,96	1 221,21	1 266,77	1 316,38	1 371,52
% նախորդ տարվա համեմատ	-	-2,0	-4,2	-3,3	-4,5	3,0	3,3	3,7	3,9	4,2

*Կանխատեսումներ

Աղբյուր՝ BusinesStat, www.businesstat.ru

Կանխատեսումների համաձայն 2017թ-ին գինու առաջարկը կաճի 3%-ով և հետագա տարիներին կշարունակի միջինում 3.8% աճ արձանագրել՝ 2021թ-ին կազմելով մոտ 1 371 մլն լ[34]:

Չնայած գինու արտադրական ծավալների կրճատմանը՝ տարեցտարի աճում է Ռուսաստանից գինու արտահանումը: Ռուսաստանից արտահանման ծավալների մեծ մասը բաժին է ընկնում է Ուկրաինային և Չինաստանին, ուր 2016թ-ին արտահանման ընդհանուր արժեքը հավասար է եղել համապատասխանաբար 9,924 և 4,410 հազ ԱՄՆ դոլար: Արտահանման այլ ուղղություններն են Բելառուսը, Վրաստանը և Լատվիան:

Ստորև ներկայացված գծապատկերն ամփոփում է Ռուսաստանից գինու արտահանման ծավալները 2012-2016 թվականներին՝ ըստ երկրների:

[34] BusinesStat. Анализ рынка вин в России в 2012 -2016 гг , прогноз на 2017-2021гг



Աղբյուր՝Trade Map - Trade statistics for international business development, www.trademap.org

Եվրոպական Միություն

Եվրոպայում են գտնվում աշխարհի երեք առաջատար գինի արտադրող երկրները՝ Իտալիան, Ֆրանսիան և Իսպանիան: Եվրոպական մյուս երկրների համեմատ այդ երկրներում ավելի մեծ են գյուղատնտեսական տարածքները, որտեղ հնարավոր է զբաղվել խաղողագործությամբ: Այսպես օրինակ Ֆրանսիայում 2015թ-ին խաղողի տնկարկների ընդհանուր տարածքը հավասար է եղել 786,000հա:Եվրոպայի գինեգործության ոլորտում մեծ դեր խաղացող այլ երկրներն են Գերմանիան և Պորտուգալիան: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է եվրոպական երկրներում գինու արտադրությունը 2016թ.:

Աղյուսակ 29. Գինու արտադրությունը Եվրոպական երկրներում, 2015-2016

Երկիր	Արտադրություն, հազ. լ.	% նախորդ տարվա համեմատ
Բուլղարիա	136,700	+64%
Չեխիա	81,900	+53%
Գերմանիա	881,900	-4%
Հունաստան	250,100	-11%

Իսպանիա	4,200,100	-5%
Ֆրանսիա	4,785,700	+2%
Խորվաթիա	69,100	-18%
Իտալիա	5,149,600	+15%
Կիպրոս	7,900	-15%
Լյուքսեմբուրգ	11,100	-11%
Հունգարիա	277,900	+0%
Ավստրիա	226,800	+13%
Պորտուգալիա	704,500	+14%
Ռումինիա	378,700	-1%
Սլովենիա	87,700	+24%
Սլովակիա	37,500	+31%
Մեծ Բրիտանիա	4,000	-15%

Աղբյուր՝ European Commission, Directorate-General for Agriculture and Rural Development

Շուկայում առկա գինիներից Եվրոպայում հատկապես տարածված են կարմիր, սպիտակ և ռոզե տեսակները: Մինչդեռ ռոզեն ավելի տարածված է Ֆրանսիայում, որտեղ վերջինիս մասնաբաժինը ընդհանուր արտադրական ծավալներում հավասար է 16%, սպիտակ և կարմիր գինիներն ավելի լայն տարածում ունեն Եվրոպայի ամբողջ տարածքում:

Ըստ գինու սպառման ծավալների՝ Եվրոպայում առաջատար է համարվում Ֆրանսիան՝ 2015թ-ին սպառելով 27,200 մլն լ գինի: Երկրորդ տեղում է գտնվում Իտալիան՝ նույն ժամանակահատվածում սպառելով 20,500 մլն լ գինի[35]:

2016թ-ին Եվրոպայի Միության տարածք ներմուծվել է 1,421 մլն լ գինի, նախորդ ժամանակաշրջանի համեմատ այս ցուցանիշը էական փոփոխությունների չի ենթարկվել: Ստորև բերված աղյուսակում երևում են 2016թ-ին դեպի ԵՄ արտահանող հիմնական երկրները, ինչպես նաև եվրոպական 5 հիմնական երկրները, որոնք գինի են ներմուծել.

[35]Statista. U.S. Wine Market in Europe - Statistics & Facts: https://www.statista.com/topics/4034/wine-market-in-europe/

Աղյուսակ 30. ԵՄ գինի արտահանող և ներմուծող հիմնական երկրներ

ԵՄ արտահանող երկիր	Արտահանման ծավալ, հազ լ	Մասնաբաժին	ԵՄ երկիր	Ներմուծման ծավալ, հազ լ	Մասնաբաժին
Ավստրալիա	3,378	24%	Մեծ Բրիտանիա	6,520	46%
Հարավային Աֆրիկա	3,053	21%	Գերմանիա	2,353	17%
Չիլի	3,026	21%	Նեդերլանդներ	986	7%
ԱՄՆ	2,104	15%	Շվեդիա	660	5%
Նոր Զելանդիա	883	6%	Դանիա	635	4%

Աղբյուր՝ European Commission, Directorate-General for Agriculture and Rural Development

ԵՄ երկրները համարվում են առաջատարը ոչ միայն գինու արտադրության, այլ նաև արտահանման տեսանկյունից: 2016 թ-ին ԵՄ-ից արտահանվել է ավելի քան 2,234 մլն լ գինի՝ արձանագրելով 1.6% աճ նախորդ ժամանակահատվածի համեմատ: Արտահանման հիմնական ուղղություններն են Ամերիկան, Չինաստանը, Ռուսաստանի Դաշնությունը, Կանադան և Շվեյցարիան: Ստորև ներկայացված է 2016թ-ին ԵՄ-ից արտահանող առաջատար երկրների ցանկը, ինչպես նաև եվրոպական գինի ներմուծող հիմնականը երկրների ցանկը:

Աղյուսակ 31. ԵՄ-ից գինի արտահանող և ներմուծող հիմնական երկրներ

ԵՄ երկիր	Արտահանման ծավալ, հազ. լ	Մասնաբաժին	ԵՄ-ից ներմուծող երկիր	Ներմուծման ծավալ, հազ. լ	Մասնաբաժին
Իտալիա	6,813	30%	ԱՄՆ	5,920	26%
Ֆրանսիա	6,119	27%	Չինաստան	3,249	15%
Իսպանիա	5,836	26%	ՌԴ	2,502	11%
Պորտուգալիա	1,136	5%	Կանադա	1,761	8%
Գերմանիա	791	4%	Շվեյցարիա	1,679	8%

5.5. Հայկական գինու արտահանման ուղիներ

Հարցմանը մասնակցած ընկերությունների կողմից 2016թ-ից իրականացրած վաճառքի 44%-ը արտահանվել է: Արտահանման հիմնական ուղղությունը եղել է Ռուսաստանի Դաշնությունը, ուր արտահանվել է ընդհանուր արտադրանքի 87%-ը: Ստորև բերված պատկերն ամփոփում է հարցված ընկերությունների արտահանման հիմնական ուղղությունները, ինչպես նաև այդ ուղղություններով արտահանման ծավալների մասնաբաժինը:

Նկար 24. Հարցված ընկերությունների գինու արտահանման ուղղությունները, 2016թ



Ի տարբերություն տեղական շուկայում վաճառքի, արտահանման դեպքում ընկերությունները նախընտրում են օգտվել արտահանման միայն մեկ ուղուց: Հարցված ընկերությունների միայն 15%-ն է արտահանում իր արտադրանքը մեկից ավելիուղիներով:Ընկերությունների մեծ մասը գինին արտահանում է վարձակալած տրանսպորտով. այս միջոցով արտահանվել է ընդհանուր արտադրանքի 69%-ը: Ստորև ներկայացված աղյուսակում ամփոփված է ընկերությունների կողմից իրականացվող արտահանումն ըստ ուղիների:

Աղյուսակ 32. Արտադրանքի արտահանման ուղիները

Արտահանման ուղի	Ընկերություններ, %	Ընդհանուր

		արտադրանքի մասնաբաժին, %
Վարձակալած տրանսպորտային միջոցով	60%	69%
Միջնորդների միջոցով	15%	13%
Սեփական տրանսպորտային միջոցներով	15%	9%
Տանում է արտերկրի ընկերությունը	15%	9%

Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ հայկական գինեգործները հիմնականում արտահանում են գնորդների միջին սեգմենտի համար նախատեսված գինի: Հատկանշական է, որ ընկերությունների զգալի մասը միաժամանակ գործում է մի քանի գնային սեգմենտներում,ընկերությունների միայն 36.8%-ն է գործում միայն մի գնային սեգմենտում: Միջին և բարձր գնորդներին թիրախավորում է հարցվածների 36.8%-ը:Բոլոր հարցված ընկերությունները նշել են միջին գնողունակությամբ սեգմենտը որպես հիմնական թիրախ: Ստորև բերված պատկերը ներկայացնում է հարցմանը մասնակցած ընկերությունների բաշխվածությունն ըստ արտերկրում վերջիններիսգնորդների սեգմենտների.

Նկար 25. Ընկերությունների բաշխվածությունն ըստ արտերկրում գնորդների սեգմենտների, %



5.6. Շուկայի մուտքի խոչընդոտներ

Արտահանման հետ կապված լուրջ խոչընդոտների առջև են կանգնում հատկապես փոքր և միջին ընկերությունները: Դժվարությունները հիմնականում կապված են սպառման շուկա գտնելու և արտադրանքը ճիշտ դիրքավորելուու մարքեթինգային ռազմավարություն իրականացնելու հետ: Որպես այս խնդրի լուծում, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը դիտարկում է հայկական գինին մեկ միասնական արտադրանքի ներքո արտահանման հնարավորությունները, ինչը սակայն կարող է իջեցնել հայկական արտադրանքի գինը:

Վերը ներկայացրած խոչընդոտից բխում է մեկ այլ խնդիր. չնայած, որ հայերն իրենց համարում են գինի արտադրող երկիր, ի տարբերություն հայկական կոնյակի հայկական գինին ճանաչված չէ աշխարհում: Գինի արտադրող հայկական ընկերությունները գինի արտահանելիս հիմնականում թիրախավորում են Սփյուռքում ապրող հայրենակիցներին և չեն փորձում գրավել նոր սեգմենտներ:

Եվ նույնիսկ արտասահմանյան շուկաներում մեծ մասնաբաժիններ գրավելու դեպքում տեղական գինեգործները կունենան անհրաժեշտ քանակությամբ գինի մատակարարելու հետ կապված խնդիրներ, քանի որ առկա է արտադրական ցածր հզորություն:

Մեկ այլ խոչընդոտ է հանդիսանում ուժեղ մրցակցային դաշտը:Կան բազմաթիվ երկրներ, որոնք մասնագիտացած են գինու արտադրությունում և բավականին մեծ հաջողությունների են հասել: Ի տարբերություն Հայաստանի, այդ երկրներն ունեն աշխարհում ավելի լայն ճանաչում և արտադրական ավելի մեծ հզորություն, ինչը լուրջ մրցակցային առավելություն է: Գինու հայրենիք հանդիսացող Իտալիայի, Ֆրանսիայի և Իսպանիայի հետ մեկտեղ միշազգային շուկայում իրենց դիրքերն են ամրապնդում Ավստրալիան, Հարավային Աֆրիկան, Չիլին, Կանադան, Բրազիլիան և Արգենտինան:Գինու արտահանման տեսանկյունից Հայաստանի հիմնական մրցակիցն է Վրաստանը: Ըստ գինեգործների միության,Վրաստանը հարկային արտոնություններ ունի ԵՄ մի շարք երկրներում, բացի այդ վրացական ոչ կառավարական կազմակերպությունները բավականին մեծ դրամաշնորհներ են ստանում ոլորտում խնդիրների լուծման համար: 2006թ-ին Ռուսաստանն արգելել էր Վրաստանից արտադրանքի արտահանումը դեպի Ռուսաստան, սակայն 2013թ-ին այդ երկու երկրների միջև վերականգնվել են տնտեսական հարաբերությունները, ինչի արդյունքում

Վրաստանը վերսկսել է գինու արտահանումը ՌԴ: Քանի որ վրացական գինին ավելի սիրված է ռուս սպառողի կողմից, շուկայում վրացական գինու առկայության դեպքում, վերջինիս կողմից գնման որոշումը կայացվում է ոչ ի օգուտ հայկական գինիների:

Արտահանումը վերահսկելու տեսանկյունից զարգացած երկրների համար պարտադիր պայման է, որպեսզի գինու որակը համապատասխանի միջազգային չափանիշներին, սակայն որոշ տեղական ընկերություններ պատշաճ կարևորություն չեն տալիս որակի կառավարմանը: Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն հիմնադրամի կողմից 2014թ-ին կատարած հետազոտության[36] ընթացքում որակի կառավարման անհամապատասխանությունը միջազգային չափանիշներին առանձնացվել է որպես գինեգործության ոլորտի առաջնային խնդիր, ինչն էլ խոչընդոտում է գինու ավելի մեծ ծավալներով արտահանմանը:

Արտահանումը վտանգող մեկ այլ խնդիր է գինու համի պահպանումը: Գինու շուկային ծանոթ փորձագետներն ասում են, որտեղական նույն գործարանի կողմից տարբեր ժամանակահատվածներում արտադրած նույն տեսակի գինու խմբաքանակների համը տարբերվում է, մինչդեռսպառողը գինին ճանաչում է համով, ինչի արդյունքումսպառողը կփոխի արտադրողին: Հայաստանում գինի արտադրող որոշ ընկերությունները չեն կարողացել իրենց արտադրության մեջ համային նույն մակարդակն ապահովել, ևնույնիսկ գինու որակի պահպանման դեպքում համը մեծ նշանակություն ունի սպառողի համար[37]:

Հարցման ընթացքում գինի արտադրողները նշել են 2016թ-ին քիչ արտահանելու կամ ընդհանրապես չարտահանելու հիմնական պատճառները: Ընկերությունների մոտ ամենահաճախ հանդիպող խնդիրը կապված է եղել գործընկերոջբացակայության հետ, որը որպես պատճառ նշել էր ընկերությունների 33%-ը: Հաճախ հանդիպող խնդիր է նաև միջազգային շուկաներում առկա ուժեղ մրցակցային դաշտը:Հարցված ընկերությունների կողմից նշած արտահանման հիմնական խոչընդոտները ներկայացրած են ստորև բերված աղյուսակում.

[36]ICare (2014). *Baseline Study of the Armenian Wine Sector*, Yerevan
[37]Արմինե Ավետյան,(28.01.2007). Ինչո՞ւաշխարհըչիճանաչումհայկականգինին՝ https://archive.168.am/articles/8997

Աղյուսակ 33. Արտահանման խոչընդոտները

Պատճառ	Ընկերություններ, %
Գործընկերների բացակայություն	33%
Ուժեղ մրցակցություն	24%
Արտադրանքի անբավարար քանակ	14%
Մարքեթինգի/ գովազդի բարձր ծախսեր	14%
Բեռնափոխադրման բարձր ծախսեր	10%
Անհրաժեշտ սերտիֆիկատների բացակայություն	5%
Այլ	10%

Հարցման ընթացքում ընկերությունները նաև նշեցին, թե ինչը կօգներ իրենց ավելի շատ արտահանել իրենց արտադրանքը: Հարցված ընկերություններն ունեին հնարավորություն նշելու մի քանի նախապայման: Ընկերությունների մեծ մասն այս հարցին պատասխանեց՝ նշելով մատչելի պայմաններով վարկային միջոցների տրամադրումը և գնորդ գործընկերների ու հնարավոր նոր շուկաների առկայությունը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է հարցված ընկերությունների կարծիքների խմբավորումն այս հարցի վերաբերյալ:

Աղյուսակ 34. Արտահանման հնարավորությունների ավելացում

Ինչը կօգներ արտահանել արտադրանքը	Ընկերություններ, %
Մատչելի պայմաններով վարկային միջոցների տրամադրում	19%
Գնորդ գործընկերների և հնարավոր նոր շուկաների առկայություն	15%
Մատչելի լոգիստիկա	12%
Գինեգործական արտադրանքի զովազդի և նոր շուկաներում ինտեգրվելու հարցում աջակցություն	12%
Գնվող խաղողի արժեքի սուբսիդավորում	8%
Մթերվող հումքի բարձր որակ և ցածր գին	8%
Արտադրանքի արտահանման թիրախային շուկաների աշխարհագրական ընդլայնում	8%
Փաստաթղթավորման գործընթացի պարզեցում	4%
Տարադրամի արտարժույթի կայունություն	4%
Բեռնափոխադրումներ իրականացնելու համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցների առկայություն	4%
Սեփական արտադրանքի զովազդի պատշաճ ներկայացում այլ երկրների թիրախային շուկաներում	4%
Արտերկրում վստահելի գործընկերների առկայություն	4%

6. Խաղողագործության և գինեգործության ոլորտների SWOT վերլուծություն

Չնայած այն հանգամանքի, որ Հայաստանում գինեգործությունը համարվում է տնտեսության զարգացող ճյուղերից մեկը, կան որոշակի գործոններ, որոնք սահմանափակում են այդ աճը: Համապատասխան կրթական համակարգի բացակայությունը դեռևս համարվում է հիմնական խնդիրների աղբյուրը: Բանիմաց և փորձառու մասնագետների պակասը հատկապես զգացվում է գինեգործության համար առանցքային համարվող գինու արտադրությունում և լաբորատորիաներում: Հնացած սարքավորումները, միջազգային չափանիշներին չհամապատասխանող արտադրության և որակի կառավարման համակարգերը լրացուցիչ խոչընդոտներ են առաջացնում ոլորտի զարգացման համար:

Մեկ այլ ոչ պակաս կարևոր խոչընդոտ է համարվում թերզարգացած ենթակառուցվածքը: Հայաստանի շատ գյուղերում ճանապարհների և ոռոգման համակարգերի վատ վիճակը, կապի վատ որակը ոլորտի արդյունավետության տեսանկյունից բավականին մեծ խնդիրների աղբյուր են հանդիսանում:Արտադրանքի բարձր ինքնարժեքը հայկական գինին անմրցունակ է դարձնում միջազգային շուկաներում, հատկապես ցածր որակի պարագայում: Գինու ցածր որակը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ մեկ տեսակի գինու արտադրության համար նախատեսված խաղողը գնվում է միաժամանակ մի քանի ֆերմերներից, այդ իսկ պատճառով բարդանում է նրանց բերքի նկատմամբ որակի չափանիշների սահմանումը և դրանց վերահսկումը:

Վերը ներկայացրած թույլ կողմերի վերացումը հնարավորություն կտա գինեգործներին մուտք գործել նոր շուկաներ և դիվերսիֆիկացնել արտահանման ուղղությունները, ինչի արդյունքում կամրապնդվի հայկական գինու մրցակցային դիրքն այլ շուկաներում: Արտահանման շուկաների դիվերսիֆիկացման արդյունքում ընկերությունները կախված չեն լինի միայն մի երկրից, և ներկայիս հիմնական գործընկեր-երկիր Ռուսաստանի տնտեսական իրավիճակի վատթարացումը սպառնալիք չի հանդիսանա ձեռնարկությունների և Հայաստանի տնտեսության համար: Թույլ կողմերի կրճատումը թույլ կտա նաև օգտվել առկա հնարավորություններից և բարձրացնել ոլորտի եկամտաբերությունը:

Ստորև ներկայացված աղյուսակում ամփոփված են գինեգործության ոլորտի հիմնական ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև առկա հնարավորություններն ու սպառնալիքները:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
- Հայաստանումխաղողիյուրօրինակ, տեղականտեսակներիառկայություն, որոնք չեն աճում երկրից և Կովկասյան տարածաշրջանից դուրս - Հայաստանում գինու արտադրության հազարամյակների պատմությունը	- Թույլ զարգացած խաղողգործություն - Հնացած տեխնոլոգիաների օգտագործումը - Թերզարգացած ենթակառուցվածք - Մասնագետների մոտ համապատասխան գիտելիքների և հմտությունների բացակայություն - Արդյունավետ մարքեթինգային ռազմավարության բացակայության - Արտադրանքի բարձր ինքնարժեք - Որակի կառավարմանանհամապատասխանությունը միջազգային չափանիշներին - Խաղողի ցածր որակը կամ գինու որոշակի տեսակների համար անհրաժեշտ սորտերի բացակայությունը
Հնարավորություններ	**Սպառնալիքներ**
- Հայաստանում տեղական գինու սպառման աճը - Զարգացող և զարգացած շուկաների սպառողների ձգտումը դեպի բազմազանության - Խաղողագործության համար բարենպաստ բնակլիմայական պայմանները	- Տնտեսական ճգնաժամը և ռուբլու արժեզրկումը Ռուսաստանում - Արտահանման շուկաներում գնի տեսանկյունից ավելի մրցունակ մրցակիցների առկայությունը - Նոր ուժեղ մրցակիցների մուտքը շուկա - Ոլորտի կախվածությունը բնակլիմայական պայմաններից

7. Հավելվածներ

Հավելված 1. Հարցումներով ընդգրկված համայնքների և գինեգործական ձեռնարկությունների ցանկ

Գյուղացիական տնտեսություններ				Վերամշակող ձեռնարկություններ	
Մարզ	N	Համայնք	ԳՏ-ների թիվը	N	Անվանումը
Արագածոտն	1	Նոր Եդեսիա	11	1	Պռոշյանի կոնյակի գործարան
	2	Կոշ	10	2	«Արմենիա Վայն» գործարան ՍՊԸ
				3	«Վան Արդի» ՍՊԸ
Արարատ	3	Այգեզարդ	10	4	«Սիսավանի գինու գործարան» ՍՊԸ
	4	Վ.Արտաշատ	11	5	«Մրգանուշի գինու, կոնյակի գործարան» ՍՊԸ
	5	Շահումյան	10	6	«Վեդի Ալկո» ՓԲԸ
				7	«Վան-777»
				8	«Շահումյան-Վին» ՍՊԸ
				9	«Շատո-Առնո» ՍՊԸ
				10	«Տավինկո» գինու կոնյակի գործարան ՍՊԸ
Արմավիր	6	Տալվորիկ	11	11	«Մառան» ՍՊԸ
	7	Սարդարապատ	10	12	«Ալվան» ՍՊԸ
	8	Դալարիկ	10		
Վայոց Ձոր	9	Մալիշկա	10	13	«Արենիի գինու գործարան» ՓԲԸ
	10	Արենի	11	14	«Գետնատուն» ՍՊԸ
				15	«Վայք Գրուպ» ՓԲԸ
				16	«Մաթևոսյան Վայն» ՍՊԸ
				17	«Արենի Վայն» ՍՊԸ
Տավուշ	11	Աչաջուր	10	18	Իջևանի գինու, կոնյակի գործարան ՓԲԸ
	12	Այգեհովիտ	12		
Կոտայք				19	«Բյուրեղ Ալկո» ՍՊԸ
Երևան				20	Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ
				21	«Աստաֆյան» գինու կոնյակի գործարան/